ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-29-Ո-Կ-18

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՌՈՒԲԻՆԱ ԱԹՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

27 ապրիլի 2026 թվական | ք. Երևան

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

Բարձրագույն դատական խորհրդի նախագահ	*Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆԻ*
մասնակցությամբ՝	
անդամներ	*Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ*
	Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Կ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
	Ե. ԹՈՒՄԱՆՅԱՆՑԻ
	Մ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ
	Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ
	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
	ԷԴ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
	Ք. ՄԿՈՅԱՆԻ
Արդարադատության նախարարի տեղակալ	*Գ. ՔՈՉԱՐՅԱՆԻ*
Արդարադատության նախարարի ներկայացուցիչ	*Ն. ՉԵՅՆԱԼՅԱՆԻ*
Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր	*Ռ. ԱԹՈՅԱՆԻ*

Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի ներկայացուցիչ *Կ. ՀԱԿՈԲՅԱՆԻ*

քարտուղարությամբ՝ *Մ. ԹԵԼՈՅԱՆԻ*

դռնբաց նիստում, քննության առնելով Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանի՝ «Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռուբինա Աթոյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին» 2026 թվականի մարտի 9-ի թիվ 21-Ա որոշումը և կից ներկայացված փաստաթղթերը.

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **Գործի նախապատմությունը**

Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի (այսուհետ նաև՝ Հաղորդում ներկայացրած անձ) 17.07.2025 թվականի հաղորդումը և ի լրումն դրա ներկայացված Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին փոխարինողի 15.08.2025 թվականի գրությունը:

Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանի (այսուհետ նաև՝ Նախարար) 07.01.2024 թվականի թիվ 01-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ Որոշում) Դատավորի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Նախարարի 09.03.2026 թվականի թիվ 21-Ա որոշմամբ միջնորդություն (այսուհետ նաև՝ Միջնորդություն) է ներկայացվել Բարձրագույն դատական խորհուրդ (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռուբինա Աթոյանին (այսուհետ նաև՝ Դատավոր կամ Դատարան) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Խորհրդի 19.03.2026 թվականի որոշմամբ նշանակվել է դատական նիստ:

06.04.2026 թվականին կայացած նիստում գործի քննությունն ավարտվել է և դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 27.04.2026 թվականին:

2. Վարույթ հարուցած մարմնի դիրքորոշումը

Նախարարը, վկայակոչելով իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՔԴՕ) 127-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 235-րդ հոդվածի 1-ին մասը, 236-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, 262-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 10-րդ կետերը, 262-րդ հոդվածի 3-րդ մասը, 264-րդ հոդվածի 2-րդ մասը, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ Ընտանեկան օրենսգրքի (այսուհետ՝ ԸՕ) 110-րդ հոդվածի 3-րդ մասը, 113-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 114-րդ հոդվածի 2-րդ մասը, 116-րդ հոդվածի 1-ին մասը, Կառավարության 22.06.2006 թվականի N 962-Ն որոշմամբ հաստատված՝ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառման» կարգի (այսուհետ՝ Հաշվառման կարգ) 1-ին կետը, նույն կարգի 4-րդ, 14-15-րդ կետերը, Կառավարության 18.03.2010 թվականի N 269-Ն որոշմամբ հաստատված՝ «Որդեգրման» կարգի (այսուհետ՝ Որդեգրման կարգ) 1-ին կետը, նույն կարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերը, Որդեգրման կարգի 7-րդ կետը, նույն բաժնի 8-րդ, 9-րդ, 13-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ կետերը նշել է, որ վերոգրյալ իրավական նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ երեխայի որդեգրման վերաբերյալ գործերը դատարանի կողմից քննության են առնվում հատուկ վարույթի կարգով, հետևաբար դրանք պետք է իրականացվեն ՔԴՕ «Հատուկ վարույթներ» ենթաբաժնում սահմանված դրույթների պահպանմամբ, որոնք երեխա որդեգրելու վերաբերյալ դիմումին կցվող փաստաթղթերի համար առաջադրում են հատուկ կանոններ: Մասնավորապես՝ երեխա որդեգրելու վերաբերյալ դիմումին, ի թիվս այլնի, պետք է կցվի որդեգրվող երեխայի կենտրոնացված հաշվառման մասին տեղեկանքը, ինչպես նաև կառավարության լիազորած մարմնի՝ օրենքով սահմանված բովանդակությունը պարունակող եզրակացությունը:

Նախարարը նշել է, որ ՔԴՕ 262-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով և ԸՕ 113-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությամբ սահմանված կարգավորումների համադրությունից հետևում է, որ դրանց շրջանակում ՀՀ սահմաններում բնակվող ՀՀ քաղաքացիների կողմից ՀՀ երեխայի որդեգրման դեպքում որպես կառավարության լիազորված մարմին հանդիսանում և համապատասխան եզրակացությունը տալիս է մարզպետարանը: Ընդ որում, օրենսդիրը կառավարության լիազոր մարմնի կողմից տրվող եզրակացության բովանդակության նկատմամբ առաջադրում է որոշակի պահանջներ: Դրանով պետք է ցույց տրվի որդեգրել ցանկացող կոնկրետ անձի կողմից որդեգրման ենթակա կոնկրետ երեխայի որդեգրման հիմնավորվածությունը, այդ որդեգրումը երեխայի շահերին համապատասխանելու հանգամանքը՝ զուգահեռ ներկայացնելով այդ երկուսի շփման վերաբերյալ փաստական տվյալներ: Կոնկրետ

անձի կողմից կոնկրետ երեխայի որդեգրումը հիմնավորված լինելու և երեխայի շահերից բխելու հանգամանքը, որպիսի եզրահանգման հանգել է իրավասու մարմինը, պարտադիր նախապայման է որդեգրման դատավարական գործընթաց սկսելու համար:

Անդրադառնալով երեխայի՝ որպես որդեգրման ենթակա երեխա հաշվառման իրականացման ընթացակարգին՝ Նախարարը հարկ է համարել նշել, որ ԸՕ 114-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որդեգրման ենթակա երեխաների հաշվառումն իրականացվում է սույն օրենսգրքի 110-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:

Մարզպետարանը երեխաների մասին նման տեղեկություններ ստանալու պահից երեք օրվա ընթացքում իրականացնում է երեխաների հաշվառումը և հայտնում այդ մասին Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնին, ինչպես նաև ապահովում է այդ երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը: (...):

Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինն իրականացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառումը, աջակցում է այդ երեխաների հետագա խնամքի և դաստիարակության կազմակերպմանն ընտանիքներում:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառումն իրականացնելու կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Որդեգրման կարգի շրջանակներում տրված է նաև որդեգրման ենթակա երեխայի մասին տեղեկանքի (N 2 ձև) օրինակը:

Ըստ Նախարարի վերոգրյալից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի հաշվառման պարտադիր պահանջ՝ հաշվառման ընթացակարգը բաժանելով միմյանց հաջորդող 3 փուլերի՝ սկզբնական, որն իրականացնում են խնամակալության և հոգաբարձության մարմինները, տարածքային, որն իրականացնում են մարզպետարանները, և կենտրոնացված, որն իրականացնում է Նախարարությունը: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվից որդեգրման ենթակա երեխաներ են համարվում այն երեխաները, որոնց առնչությամբ ծագում են «օրենսդրությամբ որդեգրման համար նախատեսված իրավական հիմքեր: Ընդ որում, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվից որդեգրման ենթակա Երեխաների առանձնացումը և նրանց՝ որպես որդեգրման ենթակա երեխաներ հաշվառման վարումը հիշյալ ընթացակարգում իրականացվում է տարածքային փուլում՝ մարզպետարանների կողմից: Որդեգրման ենթակա երեխայի հաշվառման ընթացակարգը եզրափակվում է Նախարարություն կողմից երեխայի կենտրոնացված հաշվառմամբ, որի արդյունքում կազմվում է որդեգրման ենթակա երեխայի մասին Ձև 2 տեղեկանքը:

Նախարարը նշել է, որ որդեգրման ենթակա երեխաները ենթակա են հաշվառման օրենքով սահմանված կարգին համապատասխան և դրա համար լիազորված մարմինների կողմից: Ընդ որում, հաշվառման ընթացակարգը ներառում է որոշակի հաջորդական գործառույթների իրականացում (որդեգրման ենթակա երեխաների հաշվառում նրանց փաստացի գտնվելու վայրի մարզպետարանների կամ Երևանի քաղաքապետարանի կողմից, այնուհետև հաստատված ձևի փաստաթղթի՝ որդեգրման ենթակա երեխայի անձնական քարտի և դրա հիման վրա անձնական գործի կազմում) և ավարտվում է Նախարարության կողմից երեխաների կենտրոնական հաշվառմամբ ու դրա մասին համապատասխան աշխատակազմին ծանուցմամբ: Նախարարության կողմից կազմված՝ որդեգրման ենթակա երեխայի մասին «Ձև N 2» տեղեկանքի առկայությունը հավաստում է, որ որդեգրման ենթակա երեխան վերցված է կենտրոնացված հաշվառման: Նշվածից պարզ է դառնում, որ ՔԴՕ 262-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի պահանջը կարող է պահպանված համարվել, եթե երեխա որդեգրելու վերաբերյալ դիմումին կցված է «Ձև N 2» տեղեկանքը:

Տեղեկանքի և եզրակացության բացակայության դեպքում օրենսդիրը դատարանին արգելում է դիմումի հիման վրա հարուցել քաղաքացիական գործ՝ պարտավորեցնելով դատարանին վերադարձնել դիմումը: Այսպիսով, օրենսդիրն ի սկզբանե անհնար է համարում դիմումի հիման վրա երեխայի որդեգրման վերաբերյալ վարույթի հարուցումն այն պատճառով, որ օրենքի տեսանկյունից բացակայում է որդեգրման ենթակա երեխան, հիմնավորված չէ որդեգրումը և այն չի բխում երեխայի շահերից:

Նախարարը նշել է, որ քննարկվող դեպքում.

1) Գործի նյութերի, մասնավորապես՝ Դիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետևում է, որ Դիմումին կցված չի եղել որդեգրվող Երեխայի կենտրոնացված հաշվառման մասին «Ձև N 2» տեղեկանքը: Վճիռը ևս չի պարունակում որևէ տեղեկատվություն «Ձև N 2» տեղեկանքի կամ, առհասարակ, Երեխայի կենտրոնացված հաշվառման վերաբերյալ: Ընդ որում, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Դիմումի բովանդակությունից, մասնավորապես դիմումում նշվել է, որ համապատասխան դիմումներ են ներկայացվել Մարզպետարան և Նախարարություն՝ Երեխայի կենտրոնացված հաշվառման մասին տեղեկանք տրամադրելու խնդրանքով, որպիսի տեղեկանքը կներկայացվի դատարանին այն ստանալուն պես, ինչպես նաև դրան կցված՝ 22.07.2024 թվականին գրությունից Դատարանի համար ակնհայտ է եղել, որ Երեխայի վերաբերյալ դեռևս առկա չէ կենտրոնացված հաշվառման վերաբերյալ տեղեկանք:

2) Դատարանը 06.08.2024 թվականի որոշմամբ, հիմք ընդունելով ՔԴՕ 262-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի պահանջը, վերադարձրել է դիմումը՝ սահմանելով

եռօրյա ժամկետ դիմումում թույլ տված թերությունները (այն է՝ դիմումին կից չեն ներկայացվել բոլոր փաստաթղթերի պատճենները, որոնք Դիմողը ներկայացրել է Ծառայության 28.06.2024 թվականի եզրակացությունը ստանալիս) վերացնելու ու դիմումը կրկին ներկայացնելու համար: Դիմողի ներկայացուցչի կողմից 13.08.2024 թվականին կրկին ներկայացված Դիմումը Դատարանը 22.08.2024 թվականին ընդունել է վարույթ՝ նշելով, որ այն ներկայացվել է օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ:

Նախարարը նշել է, որ ծառայության կողմից 28.06.2024 թվականին տրված «Եզրակացություն» վերտառությամբ փաստաթղթի ուսումնասիրությունից հետևում է, որ այն իրենից ներկայացնում է Դիմողի կենսապայմանների ուսումնասիրություն հիմքով կազմված փաստաթուղթ: Դրանում նշված է, որ Դիմողի սոցիալ-տնտեսական պայմաններն ուսումնասիրելու և որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառելու մասին եզրակացություն տալու նպատակով կատարվել է տնային այց Հասցե, որի արդյունքում տվյալ մարմինը նպատակահարմար է գտել տալ դրական եզրակացություն Դիմողին որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառելու մասին: Այսպիսով՝ անկախ այն հանգամանքից, որ նշված փաստաթուղթը ևս ունի «Եզրակացություն» վերնագիրը, այն տրված չէ Կառավարության լիազոր մարմնի՝ տվյալ դեպքում մարզպետարանի կողմից և դրա բովանդակությունը չի համապատասխանում ՔԴՕ 262-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով սահմանված պահանջներին: Մասնավորապես՝ դրանում ամրագրված են միայն Հասցեում իրականացված ուսումնասիրության արդյունքները, առկա չէ ոչ մի եզրահանգում որդեգրման հիմնավորվածության, այդ որդեգրումը Երեխայի շահերին համապատասխանելու վերաբերյալ: Ավելին՝ որպես տվյալ փաստաթուղթը տալու նպատակ, դրանում արձանագրված է, որ տրվում է դրական եզրակացություն Դիմողին՝ որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառելու մասին:

Վերոգրյալ իրավական նորմերի և Գործի փաստական հանգամանքների համադրությունից ըստ Նախարարի հետևում է, որ Դիմումը չի բավարարել երեխա որդեգրելու վերաբերյալ դիմումին պարտադիր կցվող փաստաթղթերին, մասնավորապես, ՔԴՕ 262-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 10-րդ կետերով ներկայացվող օրենսդրական պահանջը, որպիսի պայմաններում Դատարանի համար ծագել է ՔԴՕ 262-րդ հոդվածի 3-րդ մասով և 127-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ Դիմումը վերադարձնելու պարտականություն, մինչդեռ Դատարանը նշված նորմերի անտեսմամբ 28.04.2022 թվականի որոշմամբ Դիմումն ընդունել է վարույթ:

Որդեգրման կարգի շրջանակներում տրված են նաև որդեգրել ցանկացող անձի մասին տեղեկանքի (N 5 ձև) օրինակը:

Վերոնշյալ իրավական նորմերի համադրված վերլուծությունից ըստ Նախարարի հետևում է, որ երեխա որդեգրելու իրավունքը պատկանում է օրենքով սահմանված կարգով որպես երեխա որդեգրել ցանկացող հաշվառված անձին: Որպես երեխա որդեգրել ցանկացող անձ հաշվառվելու համար հայտ կարող է ներկայացնել ցանկացած չափահաս անձ, բացառությամբ ԸՕ 116-րդ հոդվածի 1-ին մասով նշված դեպքերի: Երեխա որդեգրել ցանկացող անձի՝ երեխա որդեգրելու իրավունք ունենալու հանգամանքը ստուգվում է Որդեգրման կարգին համապատասխան իրականացվող հաշվառման ընթացակարգի շրջանակներում և հաստատվում է Նախարարության կողմից կենտրոնացված հաշվառման վերցնելով, որի արդյունքում կազմվում է որդեգրել ցանկացող անձի մասին Ձև 5 տեղեկանքը: Ընդ որում, հաշվառման համար իրականացվող գործընթացի շրջանակներում մարզպետարանի աշխատակազմի կողմից դրական եզրակացություն տրվում է ոչ միայն Որդեգրման կարգի 7-րդ կետով նախատեսված փաստաթղթերում անհրաժեշտ տեղեկությունների ամբողջականությունը և անթերի լինելն ստուգելու և հաստատելու, այլև օրենքով նախատեսված որդեգրումն արգելող հիմքերի բացակայությունը ստուգելու և հաստատելու արդյունքում: Այսպիսով, Նախարարության կողմից կազմված՝ որդեգրել ցանկացող անձի մասին «Ձև N 5» տեղեկանքի առկայությունը հավաստում է, որ որդեգրել ցանկացող անձը բավարարում է ԸՕ 116-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Քննարկվող դեպքում Գործի նյութերի ուսումնասիրությունից ըստ Նախարարի հետևում է, որ դրանցում բացակայում է Դիմողի՝ որպես որդեգրել ցանկացող անձ կենտրոնացված հաշվառման մասին «Ձև N 5» տեղեկանքը: Վճիռը ևս չի պարունակում որևէ տեղեկատվություն «Ձև N 5» տեղեկանքի կամ, առհասարակ, Դիմողի կենտրոնացված հաշվառման վերաբերյալ:

Վերոգրյալ իրավական նորմերի և Գործի փաստական հանգամանքների համադրությունից ըստ Նախարարի հետևում է, որ Դիմողը, օրենքով սահմանված կարգով հաշվառված չլինելով որպես որդեգրել ցանկացող անձ, չի ունեցել երեխա որդեգրելու իրավունք, իսկ Երեխան, օրենքով սահմանված կարգով հաշվառված չլինելով որդեգրման ենթակա երեխա, չի հանդիսացել որդեգրման ենթակա երեխա: Մինչդեռ Դատարանը վերոգրյալի անտեսմամբ՝ Վճռով հաստատել է որդեգրման իրավունք չունեցող անձի կողմից որդեգրման ենթակա երեխա չհանդիսացող անձի որդեգրման փաստը:

Որդեգրման կարգի 8-րդ կետի և ԸՕ 113-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումները սահմանում են երկու տարբեր եզրակացություններ, որոնք ունեն տարբեր բովանդակություն, կազմվում են տարբեր հիմքերով, տարբեր նպատակների համար և տարբեր ժամանակահատվածներում: Մասնավորապես՝ որդեգրման հնարավորության մասին դրական կամ բացասական եզրակացությունը կազմվում է

որդեգրել ցանկացող անձի հաշվառման գործընթացի շրջանակներում, հիմք է հանդիսանում հաշվառման գործընթացի հետագա ընթացքն ապահովելու՝ անհրաժեշտ գործողություններ իրականացնելու (հաշվառման վերցնել) և փաստաթղթեր (անձնական քարտ, անձնական գործ) կազմելու համար: Այն ներառվում է որդեգրել ցանկացող անձի անձնական գործում, որը աշխատակազմի կողմից ներկայացվում է Նախարարություն՝ կենտրոնացված հաշվառում իրականացնելու համար: Այսպիսով, այն շրջանառվում է որդեգրել ցանկացող անձի հաշվառումն իրականացնող սուբյեկտների (Մարզպետարան, Նախարարություն) միջև և նախատեսված չէ երրորդ անձանց հետ հարաբերություններում օգտագործելու համար:

Անդրադառնալով որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին եզրակացությանը, որում պարտադիր նշվում է որդեգրման ենթակա երեխայի և որդեգրողի անձնական շփումների մասին փաստական տվյալներ՝ Նախարարը հարկ է համարել նշել, որ այն փաստաթուղթ է կոնկրետ որդեգրել ցանկացող անձի կողմից կոնկրետ որդեգրման ենթակա երեխայի որդեգրման հիմնավորվածության և որդեգրումն երեխայի շահերին համապատասխանելու վերաբերյալ: Նշված փաստաթուղթը ներկայացվում է որդեգրումն հաստատելու վերաբերյալ դատարան տրվող դիմումին կից և ենթակա է հետազոտման ու գնահատման դատարանի կողմից որդեգրման փաստը հաստատելու վերաբերյալ դատական վարույթի շրջանակներում: Այն տրամադրվում է որպես որդեգրել ցանկացող անձ արդեն իսկ հաշվառված անձին, հետևապես ժամանակագրական առումով կազմվում է որդեգրման հնարավորության մասին եզրակացությունից հետո:

Ներկայացված իրավական նորմերի կարգավորումների վերաբերյալ Նախարարը անհրաժեշտ է համարել վկայակոչել նաև լիազոր մարմնի՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 03.03.2026 թվականի գրությամբ արտահայտված իրավական դիրքորոշումն առ այն, որ մինչև 29.11.2025 թվականը գործող ԸՕ 113-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված եզրակացությունը՝ որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի լավագույն շահերին համապատասխանելու մասին է, մինչդեռ մարզպետի կողմից որդեգրել ցանկացող անձին 1 տարի ժամկետով եզրակացություն տալու գործընթացը կարգավորվում է Կառավարության 18.03.2010թ. N 269-Ն որոշմամբ և հանդիսանում է որդեգրել ցանկացող անձին տրվող որդեգրման հնարավորության մասին եզրակացություն, որը կարող է լինել ինչպես դրական, նույնպես և բացասական, իսկ դրական եզրակացությունը հիմք է հանդիսանում որդեգրել ցանկացող անձին կենտրոնացված հաշվառման վերցնելու համար:

Քննարկվող դեպքում Նախարարը նշել է, որ Գործի նյութերում առկա է Մարզպետի կողմից 26.11.2024 թվականին տրված եզրակացություն՝ «Որդեգրման հնարավորության մասին», որի բովանդակության համաձայն՝ Դիմողին տրվել է դրական եզրակացություն երեխա որդեգրելու հնարավորության վերաբերյալ: Վճռի՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող էական փաստեր բաժնում և պատճառաբանական մասում վկայակոչված են Մարզպետի 26.10.2024 թվականի՝ «Որդեգրման հնարավորության մասին» եզրակացությունը և Ծառայության 28.06.2024 թվականի եզրակացությունը: ԸՕ 113-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորման լույսի ներքո դիտարկելով նշված փաստաթղթերը՝ պարզ է դառնում, որ դրանցից ոչ մեկը նշված նորմի իմաստով չի հանդիսանում եզրակացություն՝ որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին, որպիսի պայմաններում կարելի է արձանագրել, որ Դատարանի կողմից հաստատվել է երեխա որդեգրման փաստը՝ երեխա որդեգրելու կարգի խախտմամբ:

Արդարադատության նախարարի 24.02.2026 թվականի թիվ Ե-11-2026 գրությամբ տրված այն հարցադրմանն ի պատասխան, թե արդյո՞ք Մարզպետի կողմից ԸՕ 113-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով կազմվել է եզրակացություն (եթե կազմվել է՝ ե՞րբ է կազմվել, ու՞մ է տրամադրվել և ե՞րբ է տրամադրվել) Դիմողի կողմից կոնկրետ երեխայի որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվողի շահերին համապատասխանելու մասին՝ այդ երեխայի և Դիմողի անձնական շփումների փաստի վերաբերյալ տեղեկությունների նշմամբ, Մարզպետը 03.03.2026 թվականի գրությամբ հայտնել է, որ ԸՕ 113-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված եզրակացություն չի տրվել, քանի որ Դիմողը և Երեխան վերցված չեն եղել կենտրոնացված հաշվառման:

Ըստ Նախարարի՝ արդյունքում Դատարանի կողմից խախտվել են ՔԴՕ 262-րդ հոդվածի հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 10-րդ կետերով, 3-րդ մասով, 127-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ինչպես նաև ԸՕ 113-րդ հոդվածի 2-րդ մասով, 114-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 116-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

Հարկ ենք համարում նշել, որ Բարձրագույն դատական խորհուրդը (այսուհետ՝ նաև ԲԴԽ) նույն արարքի առնչությամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի նախկին դատավոր Ալեքսեյ Սուքոյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ 30.01.2023 թվականի թիվ ԲԴԽ-1-Ո-Կ-3 որոշմամբ[1] արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(…) երեխային որդեգրելու պահանջի վերաբերյալ դիմում ներկայացվելու դեպքում դատարանը պարտավոր է այն վարույթ ընդունել, եթե

[1] Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ալեքսեյ Սուքոյանի լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցվել է:

դիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը բավարարում են օրենքով սահմանված պահանջներին, հակառակ դեպքում դատարանը դիմումը վերադարձնում է: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի իրավակարգավորումից հետևում է, որ նշված նորմով սահմանված պահանջներին չբավարարող դիմումը վերադարձնելը ոչ թե դատարանի հայեցողական լիազորությունն է, այլ դատարանը պարտավոր է վերադարձնել օրենքով սահմանված պահանջները չբավարարող դիմումը, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նորմը իմպերատիվ բնույթ ունի:

(...):

Վերը նշվածից ելնելով՝ Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ տվյալ դեպքում Դատարանը պարտավոր է եղել Դիմումը վերադարձնել, մինչդեռ Դատարանի 28.04.2022թ. որոշմամբ Դիմումն ընդունվել է վարույթ: Նշված փաստի կապակցությամբ Դատավորը հայտնել է, որ Դատարանը Դիմումը վարույթ է ընդունել՝ ելնելով Երեխայի լավագույն շահերից, հաշվի առնելով գործի բնույթը և այն հանգամանքը, որ գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստեր կարող են պարզվել և պահանջվել նաև գործի քննությանն ընթացքում:

Խորհուրդը Դատավորի կողմից վերը նշված փաստարկը համարում է անհիմն, քանի որ Դատավորի կողմից Խորհրդին չի ներկայացվել որևէ փաստարկ կամ ապացույց առ այն, որ Դիմումը վարույթ ընդունելուց հետո՝ գործի քննության ընթացքում, ապացուցվել է որդեգրման ենթակա երեխայի հաշվառման վերցված լինելու հանգամանքը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ երեխայի որդեգրման վերաբերյալ գործերով նույնպես կարևոր նշանակություն ունի երեխայի լավագույն շահերի բացահայտումն ու դրանց առաջնային նշանակության տրամադրումը, քանի որ այդ գործերով կայացվող դատական ակտն առնչվում է երեխայի և այլ անձանց իրավունքներին ու շահերին, և առկա է դրանց հավասարակշռման անհրաժեշտություն:

Խորհուրդը միաժամանակ անհրաժեշտ է համարում արձանագրել, որ երեխայի լավագույն շահերի բացահայտմանը դատարանը կարող է անդրադառնալ գործը վարույթ ընդունելուց հետո՝ գործը դատաքննության նախապատրաստելու, դատաքննության և եզրափակիչ ակտ կայացնելու դատավարական փուլերում: Իսկ դիմումը վարույթ ընդունելու փուլում դատարանի առաջնահերթ խնդիրը դիմումը օրենքով սահմանված պահանջներին համապատասխան ներկայացված լինելու փաստի ստուգումն է, միաժամանակ օրենսդիրը դատարանի համար իմպերատիվ ձևով սահմանել է պարտականություն՝ վարույթ ընդունելու միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը/դիմումը:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ տվյալ դեպքում Դատարանը Դիմողի կողմից ներկայացված՝ երեխայի որդեգրումը հաստատելու մասին դիմումում նշված որդեգրման ենթակա երեխայի լավագույն շահերի բացահայտմանը կարող էր անդրադառնալ միայն նշված դիմումի վարույթ ընդունելու փուլը հաղթահարելուց, այսինքն՝ Դիմումն օրենքով սահմանված պահանջներին համապատասխան Դատարան ներկայացված լինելու փաստը պարզելուց և այն օրենքով սահմանված կարգով վարույթ ընդունելուց հետո:»:

Ի լրումն ԲԴԽ վերոնշյալ իրավական դիրքորոշման՝ հարկ է հավելել, որ դիմումի բովանդակությանը և դրան կցվող փաստաթղթերին որոշակի իմպերատիվ պահանջներ ներկայացնելով՝ օրենսդիրը պարտավորեցնում և միաժամանակ հնարավորություն է տալիս դատարանին դիմումի հիման վրա վարույթ հարուցելու հարցը լուծելիս պարզել, թե արդյոք դիմողն ունի տվյալ երեխային որդեգրելու վերաբերյալ դիմում ներկայացնելու իրավունք՝ առկա են դիմում ներկայացնելու իրավունքի նախադրյալները և պահպանվել է դիմումի ներկայացման օրենքով սահմանված կարգը:

Անդրադառնալով «երեխայի լավագույն շահ» հասկացությանը՝ Եվրոպական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետական իրավասու մարմինների, այդ թվում նաև՝ դատարանների կողմից երեխայի խնամքի և դաստիարակության վերաբերյալ վեճերի լուծման համար վճռորոշ նշանակություն ունեն երեխայի լավագույն շահերը, որոնց գնահատումը կախված է կոնկրետ գործի հանգամանքներից (տես, C. v. Finland գործով Եվրոպական դատարանի 09.05.2006 թվականի վճիռը, 52-րդ կետ, գանգատ թիվ 18249/02):

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԱՔԴ/0474/02/11 քաղաքացիական գործով 23.03.2012 թվականի որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ դատարանները երեխայի իրավունքները շոշափող ցանկացած գործ քննելիս առաջնայնությունը պետք է տան երեխայի շահերի առավել ապահովմանը:

Միաժամանակ հարկ է նշել, որ յուրաքանչյուր պետության պոզիտիվ պարտականությունն է համարվում ոչ միայն երեխայի լավագույն շահից բխող տարբեր ինստիտուտների կենսագործմանն ուղղված բոլոր ընթացակարգերի հստակ սահմանումը, այլև՝ նախատեսված ընթացակարգերի հետևողական կիրառումը, որպեսզի յուրաքանչյուր դեպքում պատշաճ կերպով ապահովվի երեխայի լավագույն շահին ուղղված պետության գործառույթները:

Որդեգրումն իրականացվում է դատական կարգով՝ ելնելով երեխայի լավագույն շահերից: Դատարանը, թեև նշել է, որ դիմումի վարույթ ընդունելը բխում է Երեխայի շահը պաշտպանելու անհրաժեշտությունից, սակայն Վճռով Դատարանի կողմից Երեխայի շահերի պաշտպանությունն ապահովող՝ օրենսդրությամբ սահմանված հանգամանքներից որևէ մեկը չի հաստատվել, և այս առնչությամբ Վճիռը չի

պարունակում որևէ հիմնավորում, որ Դատարանի կողմից ապահովվել են որդեգրման վերաբերյալ գործերով օրենսդրական պահանջները:

Այսպիսով, ինչպես ԲԴԽ վերոնշյալ որոշմամբ ներկայացված դատական գործով, սույն Գործով ևս, Դատավորի փաստարկն առ այն, որ Դիմումը վարույթ է ընդունել՝ ելնելով երեխայի լավագույն շահերից, անհիմն է, քանի որ Գործի նյութերում առկա չէ որևէ ապացույց, որ Դիմումը վարույթ ընդունելուց հետո՝ Գործի քննության ընթացքում, ապացուցվել է որդեգրման ենթակա երեխայի կենտրոնացված հաշվառման վերցված լինելու հանգամանքը, ինչպես նաև այն հանգամանքը, որ որդեգրումը հիմնավոր է և բխում է Երեխայի շահերից:

Անդրադառնալով Բացատրության հիմքում դրված փաստարկին առ այն, որ Դատարանը տիրապետելով դրական եզրակացությանը՝ տիրապետում է նաև օրենքի ուժով դրա հաշվառման կամ գրանցման փաստին՝ հարկ է նշել, որ որդեգրման իրավահարաբերությունները կարգավորող իրավանորմերը սահմանում են որդեգրման ենթակա երեխայի հաշվառման և որդեգրել ցանկացող անձի հաշվառման երկու տարբեր ինքնուրույն ընթացակարգեր: Քննարկվող դեպքում Դատավորին վերագրվում է ինչպես որդեգրման ենթակա երեխայի հաշվառման, այնպես էլ որդեգրել ցանկացող քաղաքացու հաշվառման պահանջներն անտեսելու խախտումներ: Մինչդեռ Դատավորի Բացատրությունից, մասնավորապես՝ դատավորի կողմից օգտագործված «դրա» արտահայտությունից առհասարակ պարզ չէ, թե վերոնշյալ իրավահարաբերությունները կարգավորող ո՞ր նորմերի խախտումների հերքմանն են ուղղված Դատավորի փաստարկները: Որպես ելակետ ընդունելով Դատավորի այն շեշտադրումը, որ Դատարանը տիրապետում է Արարատի մարզպետի կողմից տրված երեխա որդեգրելու հնարավորության վերաբերյալ դրական եզրակացությանը՝ կրկին պետք է նշել, որ այդ եզրակացությունը կազմվում է որդեգրել ցանկացող անձի հաշվառման ընթացակարգի շրջանակներում և այն որևէ կերպ չի վերաբերում որդեգրման ենթակա երեխայի հաշվառման գործընթացին, այդ գործընթացում որևէ իրավական նշանակություն չունեցող, որևէ իրավական հետևանքներ չառաջացնող փաստ է: Հետևապես Դատավորը տիրապետելով այդ փաստաթղթին՝ չէր կարող հետևություններ անել, թե որ փուլում է գտնվում Երեխայի հաշվառման գործընթացը:

Ամեն դեպքում սույն միջնորդությամբ արդեն իսկ ներկայացվել և հիմնավորվել է, որ դատարանը կարող է եզրահանգումներ անել որդեգրման ենթակա երեխայի և որդեգրել ցանկացող անձի հաշվառման վերցված լինելու վերաբերյալ միայն սահմանված ձևի կենտրոնացված հաշվառման տեղեկանքներին տիրապետելով: Այս կապակցությամբ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարն իր՝ 03.03.2026 թվականի գրությամբ ևս փաստել է, որ երեխայի՝ որպես որդեգրման ենթակա երեխա հաշվառված լինելու, իսկ որդեգրել ցանկացող անձի համար՝ որպես որդեգրել

ցանկացող անձ հաշվառված լինելու հանգամանքները հաստատվում են կենտրոնացված հաշվառման տեղեկանքներով:

Ինչ վերաբերում է Դատավորի այն փաստարկին, որ իրավասու մարմնի դրական եզրակացության փաստաթուղթը լինելով որդեգրման միակ իրավական հիմքը՝ իր մեջ պարունակում է նաև հաշվառման վերաբերյալ տեղեկատվություն, և որդեգրման ամբողջ գործընթացը եզրափակվում է որդեգրման դրական եզրակացությամբ, ապա հաշվի առնելով ԸՕ 112-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումներն առ այն, որ որդեգրումը դատական ակտ է, որով որդեգրվողը ձեռք է բերում կենսաբանական կապերին համարժեք ընտանեկան կապեր, որոնց շնորհիվ որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում ծնողների և զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ, Դատավորի դիրքորոշման վերաբերյալ միակ ողջամիտ դատողությանը, որին կարելի է հանգել, այն է, որ Դատարանն օգտագործելով «որդեգրում» արտահայտությունը՝ նկատի է ունեցել հաշվառման գործընթացը՝ կրկին տարբերակում չդնելով հաշվառման երկու ընթացակարգերի միջև: Այս կապակցությամբ իրավական վերլուծությունները և իրավական դիրքորոշումներն արդեն իսկ հանգամանալիորեն ներկայացված են սույն որոշմամբ:

Որդեգրման իրավահարաբերությունները կարգավորող իրավական նորմերի համաձայն՝ որդեգրումը հաստատելու մասին գործի քննությունն իրականացվում է օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում հստակ սահմանված ապացույցներով՝ ապացուցման ենթակա հանգամանքները ստուգելու և պարզելու միջոցով: Որդեգրման վերաբերյալ գործերով ապացուցման ենթակա հանգամանքները՝ որդեգրման ենթակա երեխայի կենտրոնացված հաշվառված լինելու (հաստատվում է N 2 Ձև տեղեկանքով), որդեգրել ցանկացող անձի կենտրոնացված հաշվառված լինելու (հաստատվում է 5 Ձև տեղեկանքով), կոնկրետ անձի կողմից կոնկրետ երեխայի որդեգրումը հիմնավոր լինելու և այդ երեխայի շահերից բխելու վերաբերյալ (հաստատվում է ԸՕ 113-րդ հոդվածի 2-րդ մասում նշված եզրակացությամբ), չեն կարող հաստատվել մեկ փաստաթղթով՝ որդեգրման հնարավորության վերաբերյալ եզրակացությամբ, որն օրենքով թույլատրելի ապացույց չի հանդիսանում նշված հանգամանքներից որևէ մեկի առնչությամբ: Դատավորի կողմից առաջքաշված դիրքորոշման պայմաններում օրենսդրական և ենթաօրենսդրական իրավական ակտերում ամրագրված իմպերատիվ պահանջները, այնպես էլ դրանց ապահովմանն ուղղված իրավասու մարմինների հաջորդական գործողությունները դառնում են ինքնանպատակ: Քննարկվող դեպքում, ասվածը վերաբերում է Դիմողին և Երեխային վերաբերող փաստաթղթերի փաթեթների ճշգրտման շուրջ Մարզպետարանի ու Նախարարության միջև տեղի ունեցող համագործակցությանը՝ Երեխային՝ որպես որդեգրման ենթակա երեխա և Դիմողին՝

որպես որդեգրել ցանկացող անձ կենտրոնացված հաշվառման վերցնելու նպատակով, որը Վճռի կայացումից հետո դարձել է ինքնանպատակ և առարկայազուրկ:

Անդրադառնալով Դատավորի այն փաստարկին, որ գործում առկա են որդեգրման իրավաչափության վերաբերյալ իրավասու պետական մարմինների եզրակացությունները, ապա հարկ է նշել, որ լիազոր մարմնի պահանջի հիման վրա Դատարանի կողմից ներկայացվել են Գործի ամբողջ նյութերը, որում առկա եզրակացությունների վերաբերյալ դիրքորոշում արդեն իսկ ներկայացված է:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի և ըստ այդմ՝ առանց ծնողական խնամքի մնացած անձանց որդեգրման իրավական նորմերի՝ սույն իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի չլինելու վերաբերյալ Դատավորի փաստարկի կապակցությամբ հարկ է նշել, որ ինչպես Որոշմամբ, այնպես էլ սույն միջնորդությամբ, հստակ նկարագրված են դրանց հիմքում դրված փաստական հանգամանքները և Դատավորի արարքներին տրված իրավական գնահատականը, որոնց շրջանակներում Դատավորին՝ Հաշվառման կարգին վերաբերող որևէ խախտում վերագրված չէ:

Ամբողջ վերոգրյալից հետևում է, որ Դատարանի հետևությունները կրում են վերացական բնույթ, դրանք հիմնված չեն որդեգրման գործընթացը և դրանում ներառված քայլերի հստակ հաջորդականությունը մանրամասն կարգավորող օրենսդրության՝ Որդեգրման կարգում ներկայացված իմպերատիվ պահանջների հիման վրա:

Սույն կարգապահական վարույթի համար կարևոր հանգամանք է հանդիսանում այն, որ իրողության մեջ առկա է որդեգրման իրավահարաբերությունները խաթարող, կոնկրետ անձանց իրավունքները և օրինական շահերը խախտող օրինական ուժի մեջ մտած Վճիռ:

Այսպիսով, վերոնշյալը վկայում է, որ Դատավորի կողմից Բացատրությամբ ներկայացված փաստարկները հիմնավոր չեն, դրանք հերքվում են սույն միջնորդությամբ ներկայացված հիմնավորումներով:

Անդրադառնալով մեղքի ձևին՝ անհրաժեշտ է նշել հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ.

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները խախտելը, բացառությամբ սույն օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ

կետով սահմանված կանոնի, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը: Սույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

Վարույթի փաստական հանգամանքների, կատարված իրավական վերլուծության և Բացատրության համադրման արդյունքում Նախարարը գտել է, որ Դատավորի կողմից նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները կատարվել են մեղավորությամբ, որոնք դրսևորվել են կոպիտ անփութությամբ, քանի որ Դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, մասնավորապես, երեխայի որդեգրման վերաբերյալ դիմում վերադարձնելու իմպերատիվ հիմքերի առկայության դեպքում Դատարանի կողմից դիմումը վարույթ է ընդունվել, հաստատվել է որդեգրման կարգի խախտմամբ որդեգրման իրավունք չունեցող անձանց կողմից որդեգրման ենթակա երեխա չհանդիսացող անձի նկատմամբ որդեգրումը, թեև տվյալ իրադրությունում Դատավորն ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

Նշանակված դատական նիստում վարույթ հարուցած մարմնի ներկայացուցիչը պնդել է ներկայացված միջնորդությունը:

3. Դատավորի դիրքորոշումը հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ

Դատավորը, վկայակոչելով Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածների 1-ին մասերը, «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, ՔԴՕ 3-րդ հոդվածի 1-ին մասը, 120-րդ հոդվածը, 121-րդ հոդվածի 5-րդ մասը, 127-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 235-րդ հոդվածի 1-ին մասը, 236-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, 262-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը, նույն հոդվածի 3-րդ մասը, ԸՕ 113-րդ հոդվածի 1-ին մասը, 114-րդ հոդվածի 2-րդ մասը, 116-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման իրավական խնդրին նվիրված՝ Սահմանադրական դատարանի 28.11.2007 թվականի թիվ ՍԴՈ-719, (ՍԴՈ-652, ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-765, ՍԴՈ-844, ՍԴՈ–1257, ՍԴՈ-1289) որոշումները, Եվրոպական դատարանի՝ Dumituru Gheorge v Romania (33883/06) գործով 12.04.2016 թվականի, Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով 19.06.2001

թվականի, Ալ-Ադսանին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 21.11.2001 թվականի վճիռները, Վճռաբեկ դատարանի 24.09.2014 թվականի թիվ ԵԱՔԴ/1020/02/14, 20.07.2018 թվականի թիվ ԱՐԴ/4024/02/17 որոշումները, նշել է հետևյալը.

«Վերոգրյալի հաշվառմամբ՝ սույն դեպքում Դատարանը 27.06.2024 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով մակագրված դիմումը 06.08.2024 թվականի որոշմամբ վերադարձրել է՝ դիմումում թույլ տրված թերությունները վերացնելու համար տրամադրելով ժամկետ: 13.08.2024 թվականին կրկին ներկայացված դիմումը Դատարանը 22.08.2024 թվականի որոշմամբ վարույթ է ընդունել 02.10.2024 թվականին հրավիրելով նախնական դատական նիստ:

Միաժամանակ 02.10.2024 թվականին դատական նիստում Դատարանն արձանագրելով, որ ներկայացված պահանջով պայմանավորված՝ մասնավորապես ներկայացվել է որդեգրման պահանջ, որպիսի պայմաններում դիմողի և իրավասու մարմինների ներկայացուցիչների դատական նիստին ներկայությունը պարտադիր է համարում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի վկայակոչմամբ՝ հետաձգել է դատական նիստը:

Վերոգրյալը փաստում է, որ սույն գործով Դատարանը ելնելով երեխայի լավագույն շահի ապահովման, ինչպես նաև անձի՝ «դատարան դիմելու» և «դատարանի մատչելիության» իրավունքների պահպանման անհրաժեշտությունից, 06.08.2024 թվականի որոշմամբ դիմումը վերադարձնելու արդյունքում կրկին ներկայացված դիմումն ընդունել է վարույթ՝ չսահմանափակելով դիմողի դատարանի մատչելիության իրավունքը՝ հնարավոր համարելով թերությունները շտկել գործը դատաքննության նախապատրաստելու փուլում:»:

Դատարանը, վկայակոչելով Որդեգրման կարգի 2-րդ գլխի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 3-րդ գլխի 9-րդ, 16-րդ կետերի կարգավորումները, նշել է, որ. «Վերը հիշատակված կարգավորումներից հետևում է, որ որդեգրման ենթակա երեխաների հաշվառումն իրականացնում են մարզպետարանները, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանը: Մարզպետարանի կողմից հաշվառում կատարելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում մարզպետարանի աշխատակազմը պարտավոր է երեխայի անձնական գործը ուղարկել Նախարարություն, որն էլ իրականացնում է կենտրոնական հաշվառումը: Ընդ որում, հարկ է նշել, որ վերոգրյալ կարգավորումից ակնհայտ է, որ մարզպետարանի կողմից որդեգրման ենթակա երեխայի հաշվառումը հիմք է և անվերապահորեն հանգեցնում է Նախարարության կողմից կենտրոնացված հաշվառման: Նշված կարգավորումից, ինչպես նաև Ձև 1-ից ու Ձև 2-ից բխում է նաև, որ որդեգրման ենթակա երեխան հաշվառված է համարվում մարզպետարանի կողմից հաշվառվելու պահից, որն ինքնաբերաբար հանգեցնում է կենտրոնացված հաշվառման այդ մասին տեղեկացումն ստանալու պահից: Որդեգրման հաշվառումը

կատարվում է մարզպետարանի կողմից դրական եզրակացություն տալու պահից: Հիշյալ իրավական նորմերից հետևում է նաև, որ հաշվառման գործողությունը կատարվում է միջգերատեսչական տեղեկացման ձևով՝ որպես վարչական մարմնի կողմից կատարվող վարչարարություն:

Սույն գործի փաստերի համաձայն՝ դիմողը 14.06.2024 թվականին Արարատի մարզպետարան դիմում է ներկայացրել որպես որդեգրող հաշվառվելու, այնուհետև նաև՝ որդեգրման ենթակա երեխային հաշվառելու վերաբերյալ: Մարզպետարան դիմողի կողմից ներկայացվել են անհրաժեշտ փաստաթղթերը, որոնց հիմքով Միասնական Սոցիալական Ծառայության Արտաշատի տարածքային կենտրոնի կողմից տրվել է դրական եզրակացություն դիմողին որդեգրել ցանկացող անձ հաշվառելու համար, իսկ Արարատի մարզպետի կողմից տրվել է դրական եզրակացություն Երեխա որդեգրելու հնարավորության վերաբերյալ: Համաձայն Կարգի 3-րդ գլխի 9-րդ կետի՝ որդեգրելու դրական Եզրակացության հիմքով կատարվում է համապատասխան հաշվառում, այսինքն՝ հաշվառման հիմքը մարզպետարանի կողմից տրված դրական եզրակացությունն է: Հետևաբար Դատարանը տիրապետելով դրական եզրակացության վերաբերյալ փաստաթղթին՝ տիրապետում է նաև օրենքի ուժով դրա հաշվառման կամ գրանցման փաստին: Այդ մասին են վկայում նաև Կարգի Հավելվածին կից տեղեկացման ձևերը, որոնք ուղղված են իրավասու մարմիններին, այսինքն՝ մարզպետարանը տեղեկացնում է Նախարարությանը, իսկ Նախարարությունն էլ իր հերթին՝ մարզպետարանին: Նշվածից հետևում է, որ դիմողը ներկայացնելով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և ստանալով դրական եզրակացություններ՝ իրավաչափ ակնկալիք ունի եզրակացնելու, որ իրավասու մարմիններն իրականացրել են համապատասխան գործողությունները:

Նշված տրամաբանությամբ Դատարանին ներկայացվել են բոլոր այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են հաշվառման համար, ինչպես նաև իրավասու պետական մարմինների եզրակացությունները՝ որդեգրման իրավաչափության վերաբերյալ: Սույն գործով որդեգրումը վերաբերել է քրոջ կողմից հարազատ եղբոր Երեխային որդեգրելուն, միաժամանակ ներկայացվել են երեխայի ծնողների (թե՛ հոր, թե՛ մոր) նոտարական կարգով հաստատված համաձայնությունների օրինակները, իսկ բնօրինակները ներկայացվել են մարզպետարան, երեխայի հաշվառման փաստաթղթերը, այդ թվում՝ բժշկական փաստաթղթերը, իրավասու մարմինների այդ թվում նաև՝ Նախարարության հաշվառման նպատակով իրականացրած ուսումնասիրության արդյունքները, որոնք բավարար են եղել եզրակացնելու որդեգրման գործընթացի լիարժեքության մասին:

Այսպես՝ իրավասու մարմնի դրական եզրակացության փաստաթուղթը լինելով որդեգրման միակ իրավական հիմքը՝ իր մեջ պարունակում է նաև հաշվառման վերաբերյալ տեղեկատվություն: Այսինքն՝ որդեգրման ամբողջ գործընթացը

եզրափակվում է որդեգրման դրական եզրակացությամբ: Այդ մասին է վկայում նաև Հավելված 1-ին կից Ձև 7-ի բովանդակությունը, որտեղ նշված են որդեգրողի տվյալները, որդեգրվողի տվյալները, հաշվառման տվյալները և խնդրանք՝ ստուգելու և տեղեկացնելու որդեգրման հնարավորության մասին:

Ավելին՝ ՀՀ արդարադատության նախարարին 08.08.2024 թվականին հասցեագրած գրությամբ Նախարարությունը փաստել է, որ 02.12.2024 թվականին մարզպետարանին ուղղված գրությամբ դիմել է որդեգրման համար ներկայացված փաթեթը լրամշակելու (զբաղեցրած պաշտոնի, աշխատավարձի և այլ եկամուտների մասին տեղեկանքը և այլն) պահանջով, հետևաբար գործում է Նախարարության կողմից լրամշակված փաթեթը ստանալու կանխավարկածը, հակառակ պայմաններում որդեգրման հնարավորության վերաբերյալ կտրվեր բացասական եզրակացություն, ինչը սույն դեպքում առկա չէ:»:

Դատավորը, վկայակոչելով «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի 2-րդ հոդվածը, նշել է, որ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ որոշման պատճառաբանություններում հղումներ են կատարվել նաև առանց ծնողական խնամքի մնացած անձանց որդեգրման իրավական նորմերին, որոնք ակնհայտորեն կիրառելի չեն խնդրո առարկա իրավահարաբերությունների նկատմամբ, քանի որ որդեգրման ենթակա երեխան չի հանդիսանում առանց ծնողական խնամքի մնացած երեխա: Սույն գործի փաստերից հետևում է, որ որդեգրման ենթակա անձն ունի ծնողներ, ինչպես նաև ծնողներն իրականացրել են երեխայի խնամքը, որպիսի պայմաններում որևէ իրավական հիմք առկա չէ որդեգրման ենթակա երեխային առանց ծնողական խնամքի մնացած երեխա դիտարկելու: Հաղորդում ներկայացնող մարմինը Դատավորին վերագրել է խախտումներ, որոնք սույն գործի հետ որևէ փաստական և իրավական առնչություն չունեն: Հաղորդում ներկայացնող մարմինը հղում է կատարել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հաշվառման կարգին և եզրակացրել, որ այդ պահանջները չեն պահպանվել դատավորի կողմից:

Դատավորի ներկայացուցիչ Կարեն Հակոբյանը 27.03.2026 թվականին Խորհրդին ներկայացված պատասխանով մասնավորապես նշել է.

Որդեգրման գաղտնիությունը պահպանելու նկատառումից ելնելով՝ Դատավորը նպատակահարմար է գտնում իր պատասխանի տեքստում կիրառել հետևյալ հասկացությունները՝

-Դիմող՝ թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով որդեգրման պահանջով Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան դիմած անձ,

-Դիմում՝ թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով Դիմողի կողմից ներկայացված որդեգրման վերաբերյալ դիմում,

-Երեխա՝ թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով որդեգրման ենթակա երեխա:

1. Նախևառաջ՝ Դատավորն արձանագրում է, որ իր նկատմամբ հարուցված Կարգապահական վարույթով Դատավորին մեղսագրվող ենթադրյալ արարքը, ըստ Նախարարի, հանգում է հետևյալին. Դատավորը թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի հետևյալ խախտումները՝

1) Դատավորը վարույթ է ընդունել Երեխայի որդեգրման վերաբերյալ Դիմումը այն պայմաններում, երբ առկա են եղել Դիմումը վերադարձնելու օրենսդրական հիմքեր,

2) Դատավորը վճռով հաստատել է Երեխայի որդեգրման փաստը՝ անտեսելով, որ՝

-Դիմողը, օրենքով սահմանված կարգով հաշվառված չլինելով որպես որդեգրել ցանկացող անձ, չի ունեցել երեխա որդեգրելու իրավունք,

-Երեխան, օրենքով սահմանված կարգով ներառված չլինելով որդեգրման ենթակա երեխաների ցուցակում, չի հանդիսացել որդեգրման ենթակա երեխա,

3) Դատավորը որդեգրման վերաբերյալ վճիռը կայացրել է առանց իրավասու մարմնի՝ որդեգրումը հիմնավորված լինելու և որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին՝ վերջիններիս շփման վերաբերյալ փաստական տվյալներ պարունակող եզրակացության:

2. Անդրադառնալով Կարգապահական վարույթով Դատավորին վերագրվող առաջին ենթադրյալ խախտմանը՝ Դատավորը գտնում է, որ այն չի կարող որակվել որպես կարգապահական իրավախախտում և հանգեցնել կարգապահական պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ,

2.1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածը, սպառիչ կերպով թվարկելով հատուկ վարույթի կարգով քննվող գործերի տեսակները, դրանց շարքում նախատեսել է երեխայի որդեգրման վերաբերյալ գործերը, որի ընթացակարգը սահմանված է նույն օրենսգրքի՝ «Երեխայի որդեգրման վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 34-րդ գլխի 261-265-րդ հոդվածներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 262-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ դիմումին պետք է կցվեն՝ որդեգրվող երեխայի կենտրոնացված հաշվառման մասին տեղեկանք:

Նույն հոդվածի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 2-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ դիմումին պետք է կցվեն՝ Կառավարության լիազորած մարմնի եզրակացությունը՝ որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի լավագույն շահերին

համապատասխանելու մասին՝ նշելով որդեգրվող երեխայի և որդեգրողի (որդեգրողների) անձնական շփումների փաստի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև բոլոր այն փաստաթղթերի պատճենները, որոնք որդեգրել ցանկացող անձը (անձինք) ներկայացրել է (են) եզրակացությունն ստանալու համար:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածում նշված պահանջները չկատարելու դեպքում դատարանը սույն օրենսգրքի 127-րդ հոդվածով սահմանված կարգով վերադարձնում է դիմումը:

2.2. Դատավորն արձանագրում է, որ ի սկզբանե Դիմողը Դիմումը դատարան է ներկայացրել 26.07.2024 թվականին: Դիմումին կից փաստաթղթերը ներկայացված են եղել թերի չեն բավարարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 262-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

2.3. Ուստի Դատավորը 06.08.2024 թվականի որոշմամբ վերադարձրել է Դիմումը՝ այն հիմքով, որ Դիմումը չի համապատասխանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 262-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի պահանջին, այն է՝ Դիմումի կից չեն ներկայացվել բոլոր այն փաստաթղթերի պատճենները, որոնք որդեգրել ցանկացող անձը ներկայացրել է եզրակացությունը ստանալու համար: Նշված որոշմամբ Դատավորը հնարավորություն է տվել Դիմողին՝ շտկելու Դիմումին կից փաստաթղթերի թերությունները և կրկին ներկայացնելու այն:

2.4. Ստանալով Դատավորի 06.08.2024 թվականի որոշումը՝ Դիմողը 13.08.2024 թվականին կրկին ներկայացրել է Դիմումը՝ դրան կցելով բոլոր այն փաստաթղթերի պատճենները, որոնք Դիմողը ներկայացրել է եզրակացությունը ստանալու համար:

2.5. Դատավորը 22.08.2024 թվականին կայացրել է Դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում: Դատավորի կողմից Դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը պայմանավորված է եղել հետևյալ հանգամանքներով՝

-Դիմողը Դիմումին կից ներկայացրել է Երեխայի որդեգրման գործընթացի շրջանակում իրեն հասանելի բոլոր փաստաթղթերի պատճենները:

-Դիմումի մեջ Դիմողը հատուկ նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 262-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված՝ որդեգրվող երեխայի կենտրոնացված հաշվառման մասին տեղեկանքը հնարավոր չէ ներկայացնել, քանի որ Դիմողը համապատասխան դիմումներ է ներկայացրել Արարատի մարզպետարան և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ երեխայի կենտրոնացված հաշվառման մասին տեղեկանքի տրամադրման խնդրանքով, սակայն պատասխան չի ստացվել:

-Դիմումին կից Դիմողը ներկայացրել է նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացված դիմումի օրինակը: Այդ դիմումի[2] համաձայն՝ Դիմողի ներկայացուցիչը դիմել է Արարատի մարզպետարան՝ Դիմողի և Երեխայի վերաբերյալ Կենտրոնացված հաշվառման տեղեկանքները տրամադրելու խնդրանքով, սակայն ստացել է պատասխան այն մասին, որ մարզպետարանի աշխատակազմը տեղեկանք չի տրամադրում: Ուստի Դիմողի ներկայացուցիչը խնդրել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ տրամադրել Դիմողի և Երեխայի վերաբերյալ կենտրոնացված հաշվառման տեղեկանքները:

2.6. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատավորը ձեռնպահ է մնացել Դիմողի Դիմումը երկրորդ անգամ վերադարձնելուց՝ նաև հաշվի առնելով, որ Դիմումը քննության էր ենթակա հատուկ վարույթի կարգով, և առկա չէին հակադիր շահերով օժտված կողմեր: Դատավորը վարույթ է ընդունել այն՝ հնարավորություն տալով Դիմողին գործի քննության ընթացքում ներկայացնելու պահանջվող փաստաթղթերը: Միաժամանակ, Դատավորը հաշվի է առել, որ որդեգրման գործերով իրավասու մարմնի մասնակցությունը պարտադիր է, և վերջինս կարող էր գործի քննության ընթացքում ներկայացնել անհրաժեշտ տվյալները, տեղեկությունները, ապացույցները, ինչպես նաև իր դիրքորոշումը: Դիմողի Դիմումը վարույթ ընդունելու որոշումը կայացնելիս Դատավորը գտել է, որ Դիմողը պատշաճ կատարել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 262-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 10-րդ կետերով նախատեսված՝ բացակայող փաստաթղթերի ձեռք բերման համար բոլոր անհրաժեշտ գործողությունները, և այդ փաստաթղթերը ձեռք չեն բերվել ոչ թե Դիմողի մեղքով, այլ Դիմողի կամքից անկախ պատճառներով: Այդ պայմաններում Դիմողին դատարան դիմելու իրավունքից զրկելը չէր կարող համահունչ լինել դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքների էությանը՝ հատկապես այն դեպքում, երբ բացակայող փաստաթղթերը կարող էին ներկայացվել գործի քննության ընթացքում:

Այլ կերպ ասած՝ Դատավորը, Դիմումը վարույթ ընդունելով, նպատակ է ունեցել, մի կողմից, ապահովել Դիմողի՝ դատարանի մատչելիության իրավունքի իրականացումը, իսկ մյուս կողմից՝ զերծ պահել Դիմողին հանրային իշխանության մարմինների (Արարատի մարզպետարանի ու Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության) կողմից թույլ տրված թերացումների, բացթողումների և անհարկի ձգձգումների բացասական հետևանքներից:

2.7. Վերոգրյալ վերլուծությունից բխում է, որ Կարգապահական վարույթով Դատավորին վերագրվող առաջին ենթադրյալ խախտումը՝ իր նվազ կարևորության

[2] Խոսքը վերաբերում է Դիմողի ներկայացուցչի կողմից Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 22.07.2024 թվականին ներկայացված թիվ 1201113 դիմումին:

պատճառով՝ կասկածի տակ չի դնում Դատավորի համապատասխանությունը՝ դատավորի կարգավիճակին կին և իր էությամբ չի կարող հեղինակազրկել դատական իշխանությունը: Դիմումը վերադարձնելու հիմքը, այն է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 262-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 10-րդ կետերով նախատեսված փաստաթղթերի բացակայությունը, կախված չի եղել Դիմողի կամքից և ողջամտորեն կարող էր վերացվել գործի քննության ընթացքում: Այսինքն՝ Դիմումը վերադարձնելու հիմքը չէր կարող խոչընդոտ հանդիսանալ Դիմումի ըստ էության քննության համար:

Նման պայմաններում, ինչպես նաև հաշվի առնելով, որ ի սկզբանե ներկայացված Դիմումը մեկ անգամ արդեն իսկ վերադարձվել էր Դատավորի կողմից, Դիմումը երկրորդ անգամ վերադարձնելը չէր կարող ծառայել հայցադիմումը (դիմումը) վերադարձնելու դատավարական ինստիտուտի միջոցով հետապնդվող նպատակին:

2.8. Այսպիսով, Դատավորը գտնում է, որ Դիմումը չվերադարձնելը և այն վարույթ ընդունելը միտված է եղել Դիմողի դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների կենսագործմանը: Ուստի Դիմումը չվերադարձնելը և այն վարույթ ընդունելը չի կարող որակվել որպես կարգապահական իրավախախտում և հանգեցնել կարգապահական պատասխանատվության:

3. Անդրադառնալով Կարգապահական վարույթով Դատավորին վերագրվող երկրորդ ենթադրյալ խախտմանը՝ Դատավորը գտնում է, որ այն չի կարող որակվել որպես կարգապահական իրավախախտում հանգեցնել կարգապահական պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

3.1. Դատավորն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում որդեգրման ենթակա երեխաները և երեխա որդեգրել ցանկացող անձինք ենթակա են հաշվառման: Ընդ որում, որդեգրման ենթակա երեխաների և երեխա որդեգրել ցանկացող անձանց՝ հաշվառման գործընթացները կարգավորվում է Կառավարության 18.03.2010 թվականի թիվ 269-Ն որոշմամբ հաստատված՝ «Որդեգրման կարգով» (այսուհետ նաև՝ Որդեգրման կարգ):

3.2. Որդեգրման ենթակա երեխաների հաշվառման գործընթացը հանգում է հետևյալին. Որդեգրման կարգի 3-րդ կետի համաձայն՝ որդեգրման ենթակա երեխաների հաշվառումն իրականացնում են նրանց փաստացի գտնվելու վայրի մարզպետարանների (...) աշխատակազմերը (այսուհետ՝ աշխատակազմի իրենց ենթակայության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների՝ ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների միջոցով:

Որդեգրման կարգի 4-րդ կետի համաձայն՝ հաշվառումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում աշխատակազմը որդեգրման ենթակա երեխայի անձնական քարտի (N 1 ձև) հիման վրա (...) կազմում է երեխայի համար անձնական

գործ, որի պատճենահանված օրինակն ուղարկում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) կենտրոնացված հաշվառման վերցնելու նպատակով: Որպես որդեգրման ենթակա հաշվառվում են նաև այն երեխաները, որոնց որդեգրման համար առկա է ծնողների համաձայնությունը, երբ երեխային որդեգրելու ցանկություն են հայտնել երեխայի խորթ հայրը, խորթ մայրը, նրա ազգականները կամ որդեգրել ցանկացող այլ անձ:

Որդեգրման կարգի 5-րդ կետի համաձայն՝ նախարարությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է որդեգրման ենթակա երեխայի կենտրոնացված հաշվառումը և տեղեկացնում (N 2 ձև) աշխատակազմին:

3.3. Վկայակոչված իրավադրույթներից հետևում է, որ որդեգրման ենթակա երեխաների կենտրոնացված հաշվառումն իրականացնում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ կազմելով N 2 ձև տեղեկանքը: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը որդեգրման ենթակա երեխաների կենտրոնացված հաշվառումը կատարում է հետևյալ ընթացակարգով՝

1) մարզպետարանը հաշվառում է տվյալ մարզի տարածքում փաստացի գտնվող այն երեխային, ում որդեգրման համար առկա է նրա ծնողների համաձայնությունը, և ում որդեգրելու ցանկություն են հայտնել, inter alia, նրա ազգականները,

2) այնուհետև մարզպետարանը կազմում է երեխայի անձնական գործը և այն ուղարկում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ կենտրոնացված հաշվառման վերցնելու համար,

3) Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, մարզպետարանից ստանալով որդեգրման ենթակա երեխայի անձնական գործը, 3 աշխատանքային օրվա ընթացքում որդեգրման ենթակա երեխային վերցնում է կենտրոնացված հաշվառման՝ կազմելով N 2 ձև տեղեկանքը:

Փաստորեն, որդեգրման համար երեխայի ծնողների համաձայնության և միաժամանակ այդ երեխայի ազգականի կողմից նրան որդեգրելու ցանկության առկայության դեպքում մարզպետարանը պարտավոր է հաշվառել այդ երեխային, կազմել նրա անձնական գործը և այն ուղարկել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Իսկ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, մարզպետարանից ստանալով երեխայի անձնական գործի պատճենահանված օրինակը, պարտավոր է 3 աշխատանքային օրվա ընթացքում կատարելու երեխայի կենտրոնացված հաշվառումը և կազմել N 2 ձև տեղեկանքը:

Այլ կերպ ասած՝ Որդեգրման կարգի 4-րդ կետի 2-րդ նախադասությամբ սահմանված պայմանների առկայության դեպքում մարզպետարանի կողմից երեխային հաշվառելու, նրա վերաբերյալ անձնական գործ կազմելու և այն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ուղարկելու հարցում որևէ հայեցողություն

օրենսդրությամբ նախատեսված չէ: Նույն կերպ՝ Որդեգրման կարգը երեխային կենտրոնացված հաշվառման վերցնելու և N 2 ձև տեղեկանքը կազմելու հարցում ևս որևէ հայեցողություն չի նախատեսել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համար: Եթե առկա է մարզպետարանից ուղարկված՝ երեխայի անձնական գործի պատճենահանված օրինակը, ապա Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը լիազորված է կատարելու ընդամենը մեկ իրավաչափ գործողություն, այն է՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում երեխային վերցնել կենտրոնացված հաշվառման և կազմել N 2 ձև տեղեկանքը:

3.4. Թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով Դատավորն առաջնորդվել է այն կանխավարկածով, որ Երեխան՝ որպես որդեգրման ենթակա երեխա, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից վերցված է կենտրոնացված հաշվառման՝ անկախ N 2 ձև տեղեկանքի բացակայության հանգամանքից:

Բանն այն է, որ թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով հաստատվել է, որ Դիմողը Երեխայի ազգականն է՝ հորաքույրը, իսկ Երեխայի երկու ծնողներն էլ նոտարական կարգով տվել են իրենց համաձայնությունը՝ Դիմողի կողմից իրենց Երեխային որդեգրելու վերաբերյալ: Դա նշանակում է, որ Արարատի մարզպետարանը Որդեգրման կարգի 4-րդ կետի 2-րդ նախադասության ուժով պարտավոր էր Երեխային վերցնել հաշվառման՝ որպես որդեգրման ենթակա երեխա: Այնուհետև Արարատի մարզպետարանը պարտավոր էր կազմել Երեխայի անձնական գործը և 3 աշխատանքային օրվա ընթացքում դրա պատճենահանված օրինակը ուղարկել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Իսկ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, մարզպետարանից ստանալով Երեխայի անձնական գործը, 3 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր էր Երեխային վերցնել կենտրոնացված հաշվառման՝ կազմելով N 2 ձև տեղեկանքը:

Ընդ որում, թե՛ մարզպետարանի կողմից Երեխայի անձնական գործի պատճենահանված օրինակը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ուղարկվելու, թե՛ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից Երեխային կենտրոնացված հաշվառման վերցնելու հարցում Որդեգրման կարգը որևէ հայեցողություն չի նախատեսում: Այլ կերպ ասած՝ Որդեգրման կարգից բխում է, որ Որդեգրման կարգի 4-րդ կետի 2-րդ նախադասությամբ սահմանված պայմանների առկայության դեպքում գործում է Երեխայի՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կենտրոնացված հաշվառման վերցված լինելու կանխավարկածը:

Թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով Դատավորն առաջնորդվել է հենց այդ կանխավարկածով, քանի որ Որդեգրման կարգը թույլ չի տալիս կատարելու ողջամիտ դատողություն այն մասին, որ Երեխան, ով բավարարում է Որդեգրման

կարգի 4-րդ կետի 2-րդ նախադասությամբ սահմանված պայմաններին, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից վերցված չէ կենտրոնացված հաշվառման: Իսկ N 2 ձև տեղեկանքի առկայության կամ բացակայության հանգամանքը տվյալ իրավիճակում ձևական բնույթ է կրում, քանի որ Որդեգրման կարգի 4-րդ կետի 2-րդ նախադասությամբ սահմանված պայմանների առկայությունն արդեն իսկ բավարար է Երեխայի՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կենտրոնացված հաշվառման վերցված լինելու փաստը հաստատելու համար:

3.5. Այսպիսով, Դատավորը գտնում է, որ կենտրոնացված հաշվառման վերցված լինելու մասին N 2 ձև տեղեկանքի բացակայությունն ինքնին չի կարող վկայել այն մասին, որ Երեխան ենթակա չի եղել որդեգրման: Երեխայի՝ որդեգրման ենթակա լինելը հաստատվում է ոչ թե կենտրոնացված հաշվառման վերցված լինելու մասին N 2 ձև տեղեկանքով, այլ Որդեգրման կարգի 4-րդ կետի 2-րդ նախադասությամբ սահմանված պայմանները բավարարելու վերաբերյալ թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով փաստական հանգամանքների առկայությամբ, որոնց ուժով Արարատի մարզպետարանը պարտավոր էր հաշվառել Երեխային, իսկ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պարտավոր էր կատարել Երեխայի՝ որպես որդեգրման ենթակա երեխայի կենտրոնացված հաշվառումը:

Հետևաբար, թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով N 2 ձև տեղեկանքի բացակայության պայմաններում որդեգրման պահանջը բավարարելը չի կարող որակվել որպես կարգապահական իրավախախտում և հանգեցնել կարգապահական պատասխանատվության:

3.6. Դատավորն արձանագրում է, որ որդեգրել ցանկացող անձի հաշվառման գործընթացը հանգում է հետևյալին.

Որդեգրման կարգի 7-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառվելու նպատակով անձամբ կամ լիազորված անձի միջոցով դիմում են (N 3 են) իրենց բնակության վայրի աշխատակազմ (...)

Որդեգրման կարգի 8-րդ կետի համաձայն՝ աշխատակազմը սույն կարգի 7-րդ կետով նախատեսված փաստաթղթերն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում կատարում է անձի կենսապայմանների ուսումնասիրություն, կազմում համապատասխան ակտ և տալիս որդեգրման հնարավորության մասին դրական կամ բացասական եզրակացություն:

Որդեգրման կարգի 9-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 7-րդ կետով նախատեսված փաստաթղթերում անհրաժեշտ տեղեկություններն ամբողջական և անթերի լինելու, որդեգրումն արգելող օրենքով նախատեսված հիմքերի բացակայության դեպքերում, ինչպես նաև անձի կենսապայմանների

ուսումնասիրության ակտի հիման վրա աշխատակազմը տալիս է դրական եզրակացություն, որն ուժի մեջ է այն տալու օրվանից 12 ամիս: Դիմումատուն դրական եզրակացության հիման վրա 3 աշխատանքային օրվա ընթացքում հաշվառվում է որպես որդեգրել ցանկացող անձ

Որդեգրման կարգի 16-րդ կետի համաձայն՝ աշխատակազմը որդեգրել ցանկացող անձի անձնական գործի պատճենահանված օրինակը հաշվառման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է նախարարություն՝ կենտրոնացված հաշվառում իրականացնելու նպատակով:

Որդեգրման կարգի 17-րդ կետի համաձայն՝ նախարարությունն աշխատակազմից ստացված անձնական գործի հիման վրա որդեգրել ցանկացող անձին վերցնում է կենտրոնացված հաշվառման և 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում (N 5 ձև) աշխատակազմին և որդեգրել ցանկացող անձին:

3.7. Վկայակոչված իրավադրույթներից հետևում է, որ որդեգրել ցանկացող անձի կենտրոնացված հաշվառումն իրականացնում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ կազմելով N 5 ձև տեղեկանքը: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը որդեգրել ցանկացող անձի կենտրոնացված հաշվառումը կատարում է հետևյալ ընթացակարգով՝

1) ՀՀ քաղաքացին որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառվելու նպատակով դիմում է իր բնակության վայրի մարզպետարան,

2) մարզպետարանը ստուգում դիմումատուի կողմից ներկայացված համապատասխան փաստաթղթերի ամբողջականությունը, որդեգրման արգելքների առկայությունը, կատարում է անձի կենսապայմանների ուսումնասիրություն և տալիս է որդեգրման հնարավորության մասին եզրակացություն,

3) եթե մարզպետարանը տալիս է որդեգրման հնարավորության մասին դրական եզրակացություն, ապա դիմումատուն հաշվառվում է որպես որդեգրել ցանկացող անձ,

4) մարզպետարանը՝ որդեգրման հնարավորության մասին դրական եզրակացություն տալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում որդեգրել ցանկացող անձի անձնական գործի պատճենահանված օրինակը ուղարկում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,

5) Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, մարզպետարանից ստանալով որդեգրել ցանկացող անձի անձնական գործը՝ որդեգրման հնարավորության մասին դրական եզրակացությամբ, 3 աշխատանքային օրվա ընթացքում որդեգրել ցանկացող անձին վերցնում է կենտրոնացված հաշվառման՝ կազմելով N 5 ձև տեղեկանքը:

Փաստորեն, որդեգրել ցանկացող անձի անձնական գործի պատճենահանված օրինակը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ուղարկելու հարցում Որդեգրման կարգը մարզպետարանի համար որևէ հայեցողություն չի

նախատեսել: Նույն կերպ՝ Որդեգրման կարգը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համար որևէ հայեցողություն չի նախատեսել որդեգրել ցանկացող անձին կենտրոնացված հաշվառման վերցնելու և N 5 ձև տեղեկանքը կազմելու հարցում: Եթե առկա է որդեգրման հնարավորության մասին դրական եզրակացություն, ապա մարզպետարանը պարտավոր է որդեգրել ցանկացող անձի անձնական գործի պատճենահանված օրինակը ուղարկել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Իսկ եթե առկա է մարզպետարանից ուղարկված՝ որդեգրել ցանկացող անձի անձնական գործի պատճենահանված օրինակը, որն իր մեջ պարունակում է որդեգրման հնարավորության մասին դրական եզրակացություն, ապա Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը լիազորված է կատարելու ընդամենը մեկ իրավաչափ գործողություն, այն է՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում որդեգրել ցանկացող անձին վերցնել կենտրոնացված հաշվառման և կազմել N 5 ձև տեղեկանքը:

3.8. Թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով Դատավորն առաջնորդվել է այն կանխավարկածով, որ Դիմողը՝ որպես որդեգրել ցանկացող անձ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից վերցված է կենտրոնացված հաշվառման՝ անկախ N 5 ձև տեղեկանքի բացակայության հանգամանքից:

Բանն այն է, որ թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով Դիմողը, ի թիվս այլնի, ներկայացրել է Արարատի մարզպետի կողմից 26.11.2024 թվականին Դիմողին՝ որպես որդեգրել ցանկացող անձի, տրված դրական եզրակացությունը՝ որդեգրման հնարավորության մասին: Եթե Արարատի մարզպետը Դիմողին՝ որպես որդեգրել ցանկացող անձի, տվել է դրական եզրակացություն՝ որդեգրման հնարավորության մասին, ապա դա նշանակում է, որ հաջորդաբար կատարվել են Որդեգրման կարգի 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված գործողությունները: Տալով դրական եզրակացություն որդեգրման հնարավորության մասին Արարատի մարզպետարանը պարտավոր էր 3 աշխատանքային օրվա ընթացքում Դիմողի անձնական գործի պատճենահանված օրինակը ուղարկել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Իսկ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, մարզպետարանից ստանալով Դիմողի անձնական գործը՝ որդեգրման հնարավորության մասին դրական եզրակացությամբ, 3 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր էր որդեգրել ցանկացող անձին վերցնել կենտրոնացված հաշվառման՝ կազմելով N 5 ձև տեղեկանքը:

Ընդ որում, թե՛ մարզպետարանի կողմից Դիմողի անձնական գործի պատճենահանված օրինակը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ուղարկվելու, թե՛ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից Դիմողին կենտրոնացված հաշվառման վերցնելու հարցում Որդեգրման կարգը որևէ հայեցողություն չի նախատեսում: Այլ կերպ ասած՝ Որդեգրման կարգից բխում է, որ

Արարատի մարզպետի կողմից Դիմողին տրված՝ որդեգրման հնարավորության մասին դրական եզրակացության առկայության պայմաններում գործում է Դիմողի՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կենտրոնացված հաշվառման վերցված լինելու կանխավարկածը:

Թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով Դատավորն առաջնորդվել է հենց այդ կանխավարկածով, քանի որ Արարատի մարզպետի կողմից Դիմողին տրված՝ որդեգրման հնարավորության մասին դրական եզրակացության առկայության պայմաններում Որդեգրման կարգը թույլ չի տալիս կատարելու ողջամիտ դատողություն այն մասին, որ Դիմողը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից վերցված չէ կենտրոնացված հաշվառման: Իսկ N 5 ձև տեղեկանքի առկայության կամ բացակայության հանգամանքը տվյալ իրավիճակում ձևական բնույթ է կրում, քանի որ Արարատի մարզպետի կողմից Դիմողին տրված՝ որդեգրման հնարավորության մասին դրական եզրակացության առկայությունն արդեն իսկ բավարար է Դիմողի՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կենտրոնացված հաշվառման վերցված լինելու փաստը հաստատելու համար:

3.9. Այսպիսով, Դատավորը գտնում է, որ կենտրոնացված հաշվառման վերցված լինելու մասին N 5 ձև տեղեկանքի բացակայությունն ինքնին չի կարող վկայել այն մասին, որ Դիմողը չի ունեցել երեխա որդեգրելու իրավունք: Դիմողի՝ երեխա որդեգրելու իրավունք ունենալը հաստատվում է ոչ թե կենտրոնացված հաշվառման վերցված լինելու մասին N 5 ձև տեղեկանքով, այլ որդեգրման հնարավորության մասին Արարատի մարզպետի կողմից 26.11.2024 թվականին տրված դրական եզրակացությամբ, որի ուժով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պարտավոր էր ինքնաբերաբար կերպով կատարել Դիմողի՝ որպես երեխա որդեգրելու ցանկություն ունեցող անձի կենտրոնացված հաշվառումը:

Հետևաբար, թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով N 5 ձև տեղեկանքի բացակայության պայմաններում որդեգրման պահանջը բավարարելը չի կարող որակվել որպես կարգապահական իրավախախտում և հանգեցնել կարգապահական պատասխանատվության:

4. Անդրադառնալով Կարգապահական վարույթով Դատավորին վերագրվող երրորդ ենթադրյալ խախտմանը՝ Դատավորը գտնում է, որ այն չի կարող որակվել որպես կարգապահական իրավախախտում և հանգեցնել պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ, կարգապահական

4.1. Ընտանեկան օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 113-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից երեխայի որդեգրման համար անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (...) եզրակացությունը՝ որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին

համապատասխանելու մասին՝ նշելով որդեգրվող երեխայի և որդեգրողի (որդեգրողների) անձնական շփումների փաստի վերաբերյալ տեղեկություններ (...):

Վկայակոչված իրավադրույթից հետևում է, որ երեխայի որդեգրման համար մարզպետարանի կողմից ընդունվող եզրակացությունը բովանդակում է հետևյալ դրույթներն ու տեղեկությունները՝

1) որդեգրման հիմնավորվածությունը,

2) որդեգրման համապատասխանությունը որդեգրվող երեխայի շահերին,

3) տեղեկություններ որդեգրվող երեխայի և որդեգրողի անձնական շփումների փաստի վերաբերյալ:

4.2. Թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով ներկայացված են եղել անհրաժեշտ և բավարար տվյալներ, տեղեկություններ ու փաստաթղթեր, որոնք բովանդակային առումով պարունակում են Ընտանեկան օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 113-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված եզրակացության դրույթներն ու տեղեկությունները: Այլ կերպ ասած՝ թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով Դատավորը տիրապետել է Երեխայի որդեգրման համար անհրաժեշտ՝ վերը նշված եզրակացության բովանդակության մեջ ներառվող տվյալները և տեղեկությունները:

Այսպես՝ Երեխային Դիմողի կողմից որդեգրելու հիմնավորվածությունը և այդ որդեգրման՝ Երեխայի շահերին համապատասխանությունը հաստատվում են Միասնական սոցիալական ծառայության Արտաշատի տարածքային կենտրոնի 28.06.2024 թվականի եզրակացությամբ, որն էլ իր հերթին հիմք է հանդիսացել Արարատի մարզպետի կողմից որդեգրման հնարավորության մասին 26.11.2024 թվականի դրական եզրակացություն կացությունը տալու համար: Մասնավորապես՝ Միասնական սոցիալական ծառայության Արտաշատի տարածքային կենտրոնի 28.06.2024 թվականի եզրակացությամբ նշված է, որ «Դիմողը, Երեխան և Երեխայի կենսաբանական ծնողները բնակվում են նույն հասցեում՝ 12 անդամից բաղկացած ընտանիքում: Երեխան Դիմողի եղբոր դուստրն է: Բացի Երեխայից, Դիմողի եղբայրը ունի ևս 6 երեխա: Երեխայի որդեգրման որոշումը Դիմողը կայացրել է ընտանիքի բոլոր անդամների հետ համատեղ, ովքեր իրենց համաձայնությունն ու աջակցությունն են հայտնել Դիմողի այդ որոշմանը»:

Բացի այդ, Միասնական սոցիալական ծառայության Արտաշատի տարածքային կենտրոնի 28.06.2024 թվականի եզրակացությունը տեղեկություններ է պարունակում նաև Երեխայի և Դիմողի անձնական շփումների փաստի վերաբերյալ: Քննարկվող փաստաթղթից ակնհայտ է, որ Դիմողը և Երեխան, ապրելով համատեղ նույն տանը, մշտապես գտնվում են փաստացի շփման մեջ՝ այնքանով, որքանով դա հնարավոր է մանկահասակ (շուրջ 1 տարեկան) Երեխայի պարագայում: Բացի այդ, նշված եզրակացության համաձայն՝ Դիմողը օգնել է իր եղբոր երեխաների, այդ թվում նաև՝

Երեխայի, խնամքի կազմակերպման հարցում, ինչը ևս վկայում է Երեխայի և Դիմողի անձնական շփումների փաստի մասին:

4.3. Այսպիսով, հաշվի առնելով Միասնական սոցիալական ծառայության Արտաշատի տարածքային կենտրոնի 28.06.2024 թվականի եզրակացության վերը նկարագրված բովանդակությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Արարատի մարզպետը՝ որդեգրման հնարավորության մասին 26.11.2024 թվականի դրական եզրակացությունը տվել է՝ հիմք ընդունելով հենց Միասնական սոցիալական ծառայության Արտաշատի տարածքային կենտրոնի 28.06.2024 թվականի եզրակացությամբ նշված տվյալներն ու տեղեկությունները, Դատավորը համարել է, որ բովանդակային առումով հաստատված է Ընտանեկան օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 113-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված եզրակացության մեջ ներառվող տվյալների ոչ տեղեկությունների առկայությունը:

Հետևաբար, թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով Ընտանեկան օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 113-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված եզրակացության՝ որպես առանձին կազմված փաստաթղթի, բացակայության պայմաններում որդեգրման պահանջը բավարարելը չի կարող որակվել որպես կարգապահական իրավախախտում և հանգեցնել կարգապահական պատասխանատվության:

5. Դատավորը գտնում է, որ Կարգապահական վարույթով իրեն վերագրվող ենթադրյալ արարքը չի կարող որակվել որպես կարգապահական իրավախախտում և հանգեցնել կարգապահական պատասխանատվության, քանի որ թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով ներկայացված դիմումը վարույթ ընդունելը և որդեգրման վերաբերյալ վճիռ կայացնելը ոչ այլ ինչ է, քան արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս օրենքի մեկնաբանության, փաստերի և ապացույցների գնահատման արդյունք:

Դատական օրենսգրքի 142-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված երաշխիքը կիրառելի է Դատավորի նկատմամբ: Կարգապահական վարույթով Դատավորին վերագրվող ենթադրյալ արարքը չի կարող որակվել որպես կարգապահական իրավախախտում և հանգեցնել կարգապահական պատասխանատվության, քանի որ թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով ներկայացված դիմումը վարույթ ընդունելը և այն բավարարելը Դատավորի կողմից օրենքի մեկնաբանության, փաստերի և ապացույցների գնահատման արդյունք են: Սույն դեպքում Նախարարն անտեսել է, որ արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս օրենքի մեկնաբանությունը, փաստերի և ապացույցների գնահատումը դատավորի «մենաշնորհն» է, իսկ դրա համար

դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը ոչ միայն ուղղակիորեն արգելված է Դատական օրենսգրքի 142-րդ հոդվածի 9-րդ մասով, այլ նաև հակասում է Դատական օրենսգրքի 141-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ օրինականության, դատական գործունեությանը չմիջամտելու, դատավորի և դատարանի անկախությունը հարգելու և հեղինակությունը բարձր պահելու սկզբունքներին:

6. Դատավորը գտնում է, որ Կարգապահական վարույթով իրեն վերագրվող ենթադրյալ արարքը չի կարող որակվել որպես կարգապահական իրավախախտում և հանգեցնել կարգապահական պատասխանատվության, քանի որ թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով ներկայացված դիմումը վարույթ ընդունելիս և որդեգրման վերաբերյալ վճիռ կայացնելիս իր կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կամ դատավորի վարքագծի կանոնների խախտում թույլ չի տրվել:

Դատավորը փաստում է, որ թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով ներկայացված դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը և այդ գործով կայացված վճիռը իրավաչափ դատական ակտեր են: Այդ դատական ակտերը կայացվել են Ընտանեկան օրենսգրքի քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառելի իրավակարգավորումների պահանջների պահպանմամբ: Տվյալ դեպքում որդեգրման վերաբերյալ Դիմումը մերժելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկն առկա չի եղել, քանի որ ներկայացված փաստաթղթերի թերի լինելը փարատվել է գործում առկա այլ ապացույցներով, իսկ որդեգրումն, ըստ Դատավորի, ապահովել է Երեխայի լավագույն շահերը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ սույն դեպքում բացակայում է Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ Դատական օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքը:

7. Դատավորը գտնում է, որ ինքը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության, քանի որ Կարգապահական վարույթով իրեն վերագրվող ենթադրյալ արարքի և դրա հետևանքների նկատմամբ Դատավորի մեղքը բացակայում է:

Նախարարը գտել է, որ Դատավորի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի և դատավորի վարքագծի կանոնների ենթադրյալ խախտումները կատարվել են կոպիտ անփութությամբ: Սակայն Դատավորի ենթադրյալ արարքը չի կարող համարվել կոպիտ անփութությամբ կատարված, քանի որ թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով ներկայացված Դիմումը վարույթ ընդունելը և որդեգրման վճիռ կայացնելը ոչ իրավաչափ չէ, որպիսի պայմաններում՝ Դատավորը տվյալ իրավիճակում ակնհայտորեն չէր կարող և պարտավոր չէր գիտակցել թիվ

ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով ներկայացված Դիմումը վարույթ ընդունելու կամ որդեգրման վճիռ կայացնելու ոչ իրավաչափ բնույթը: Դատավորը տվյալ դեպքում գործել է՝ ելնելով նյութական և դատավարական նորմերի իր սեփական մեկնաբանությունից:

Բացի այդ, Դատավորին վերագրվող արարքը չունի որևէ բացասական հետևանք: Մասնավորապես՝ թիվ ԱՎԴ/0645/02/24 քաղաքացիական գործով ներկայացված Դիմումը վարույթ ընդունելու և որդեգրման վճիռ կայացնելու արդյունքում Երեխան որդեգրվել է իր հորաքրոջ կողմից և մնացել է այն նույն տանը ու նույն ընտանիքում, որտեղ ինքը բնակվում էր:

Այսպիսով, Դատավորը եզրահանգում է, որ ինքը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության, քանի որ Դատավորը տվյալ իրավիճակում ակնհայտորեն չէր կարող և պարտավոր չէր գիտակցել Կարգապահական վարույթով իրեն վերագրվող արարքի ոչ իրավաչափ բնույթը: Իսկ Կարգապահական վարույթով իրեն վերագրվող արարքը որևէ բացասական հետևանք չի էլ առաջացրել: Այսինքն՝ տվյալ դեպքում Դատավորի մեղքը (կոպիտ անփութությունը) բացակայում է:

8. Ամփոփելով վերոգրյալը՝ Դատավորը հանգում է այն եզրակացության, որ Դատավորը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության Նախարարի 09.03.2026 թվականի միջնորդությամբ նշված հիմքերով:

Միաժամանակ Դատավորը սույն պատասխանի հիմքում դնում է նաև բոլոր այն փաստարկները, հիմնավորումները, վերլուծություններն ու դատողությունները, որոնք նշված են Կարգապահական վարույթի շրջանակում իր կողմից Նախարարին ներկայացված բացատրության մեջ»:

4. Հարուցված կարգապահական վարույթի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները

4.1. Քաղաքացի Ա. Ռ.-ի (այսուհետ՝ Դիմող) ներկայացուցիչը 14.06.2024 թվականին Արարատի մարզպետին (այսուհետ՝ Մարզպետ կամ Մարզպետարան) ուղղված դիմումով խնդրել է Դիմողին հաշվառել՝ որպես որդեգրել ցանկացող անձ և տրամադրել խնամակալության և հոգաբարձության մարմնի եզրակացությունն առ այն, որ Դիմողը, որպես որդեգրել ցանկացող անձ, համապատասխանում է օրենքի պահանջներին: Ներկայացվել են պահանջված փաստաթղթերը:

4.2. Միասնական սոցիալական ծառայության Արտաշատ տարածքային կենտրոնի (այսուհետ՝ Ծառայություն) կողմից 28.06.2024 թվականին տրված եզրակացությամբ նպատակահարմար է համարվել տալ դրական եզրակացություն՝ Դիմողին՝ որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառելու մասին:

4.3. Դիմողի ներկայացուցիչը 22.07.2024 թվականին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) ուղղված

դիմումով հայտնել է, որ 08.07.2024 թվականին իր կողմից դիմում է ներկայացվել Մարզպետարան Դիմողին՝ որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառելու վերաբերյալ տեղեկանք տրամադրելու, ինչպես նաև քաղաքացի Ա. Ռ (այսուհետ՝ Երեխա)՝ որպես որդեգրման ենթակա երեխա հաշվառելու և կենտրոնացված հաշվառման մասին տեղեկանք տրամադրելու վերաբերյալ: Հայտնել է նաև, որ դիմումների ընթացքի կապակցությամբ Մարզպետարանի կողմից տրվել է գրություն առ այն, որ Մարզպետարանի աշխատակազմը տեղեկանքներ չի տրամադրում: Խնդրել է տրամադրել տեղեկատվություն Դիմողի և Երեխայի անձնական գործերը Նախարարություն ստացված լինելու վերաբերյալ: Նշված փաստաթղթերը ստացված լինելու դեպքում խնդրել է տրամադրել տեղեկանքներ Դիմողի և Երեխայի կենտրոնացված հաշվառման վերցված լինելու վերաբերյալ, իսկ ստացված չլինելու դեպքում՝ կատարել հաշվառումներ և տրամադրել համապատասխան տեղեկանքներ:

4.4. Դիմողի ներկայացուցչի կողմից դիմում է ներկայացվել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ Դիմողի կողմից Երեխայի որդեգրումը հաստատելու պահանջի մասին, որը Դատավորին մակագրվել է 26.07.2024 թվականին (քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ/0645/02/24, այսուհետ՝ Գործ):

4.5. Դատարանը 06.08.2024 թվականի որոշմամբ, հիմք ընդունելով ՔԴՕ 262-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետը և ղեկավարվելով ՔԴՕ 262-րդ հոդվածի 3-րդ մասի, 127-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, վերադարձրել է դիմումը՝ սահմանելով եռօրյա ժամկետ դիմումում թույլ տված թերությունը վերացնելու ու դիմումը կրկին ներկայացնելու համար: Որոշման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ դիմումին կից ներկայացվել է Ծառայության կողմից 28.06.2024 թվականին տրված եզրակացության պատճենը և դրան կից չեն ներկայացվել բոլոր փաստաթղթերի պատճենները, որոնք որդեգրել ցանկացող անձը ներկայացրել է եզրակացությունը ստանալու համար:

4.6. Դիմողի ներկայացուցչի կողմից 13.08.2024 թվականին կրկին դիմում է ներկայացվել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ Դիմողի կողմից Երեխայի որդեգրումը հաստատելու պահանջի մասին՝ միաժամանակ միջնորդելով Դիմողին գրառել որպես Երեխայի մայր: Դիմումը հիմնավորվել է այն փաստերով և փաստարկներով, որ Ծառայության կողմից 28.06.2024 թվականին տրամադրվել է դրական եզրակացություն Դիմողին՝ որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառելու համար, Դիմողը բավարարում է օրենքով սահմանված բոլոր պահանջները՝ գնահատվել է նրա առողջական, սոցիալական կարգավիճակը, Երեխայի ծնողների կողմից 02.07.2024 թվականին նոտարական կարգով տրվել է հայտարարություն Երեխայի նկատմամբ «օրենսդրությամբ նախատեսված ծնողական իրավունքներից հրաժարվելու

վերաբերյալ, ինչպես նաև՝ նոտարական կարգով տրվել է համաձայնություն Որդեգրողի կողմից Երեխային որդեգրելու վերաբերյալ: Դիմումում նշվել է նաև, որ համապատասխան դիմումներ են ներկայացվել Արարատի մարզպետարան և Նախարարություն՝ Երեխայի կենտրոնացված հաշվառման մասին տեղեկանք տրամադրելու խնդրանքով, որպիսի տեղեկանքը կներկայացվի դատարանին այն ստանալուն պես:

Դիմումին կից ներկայացվել են՝

1) Երեխայի ծննդյան վկայականի պատճեն,

2) Երեխայի ծնողների հայտարարություններ,

3) Երեխայի ծնողների համաձայնություններ,

4) ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից 23.05.2024 թվականին տրված տեղեկանք՝ Երեխայի հաշվառման հասցեի վերաբերյալ,

5) Ծառայության 28.06.2024 թվականի եզրակացություն և կից բոլոր այն փաստաթղթերի պատճեններ, որոնք ներկայացվել են եզրակացությունը ստանալու համար,

6) Երաշխավորագիր,

7) Տեղեկանք՝ Դիմողի ֆինանսական վիճակի վերաբերյալ,

8) ԱՆ ՔԿԱԳ գործակալության կողմից տրված տեղեկանք,

9) Արտաշատի համայնքապետարանի կողմից 03.06.2024 թվականին տրված թիվ 7044 տեղեկանք բնակության վայրի վերաբերյալ,

10) Արտաշատի համայնքապետարանի կողմից 03.06.2024 թվականին տրված թիվ 7048 տեղեկանք,

11) ՆԳՆ Ոստիկանության կողմից տրված տեղեկանք՝ Դիմողի դատվածություն չունենալու և հետախուզման մեջ չգտնվելու վերաբերյալ,

12) «Արտաշատի» ԲԿ կողմից 23.05.2024 թվականին տրված եզրակացության պատճեն՝ Դիմողի առողջության վերաբերյալ և տեղեկանքներ (քաղվածքներ) բժշկական հետազոտությունների արդյունքների վերաբերյալ,

13) Դիմողի անձը հաստատող փաստաթղթի պատճեն,

14) Ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի և արտոնագրի պատճեն,

15) Լիազորագիր,

16) Նախարարություն ուղղված դիմում,

17) Իրավասու անձին դիմումը և կից փաստաթղթերը ուղարկելը հավաստող փոստային անդորրագիր:

4.7. Դատարանի 22.08.2024 թվականի որոշմամբ դիմումն ընդունվել է վարույթ՝ այն դատարանում ընդունված համարելով սկզբնական ներկայացման օրը:

4.8. Գործով հրավիրվել են 2 դատական նիստեր՝ 02.10.2024 թվականին (հետաձգվել է դատավարության մասնակիցների դատական նիստին չներկայանալու

պատճառով) և 04.12.2024 թվականին: Գործի քննությունն ավարտվել է 04.12.2024 թվականին, վճռի հրապարակման օր է նշանակվել 25.12.2024 թվականը:

4.9. 04.12.2024 թվականի դատական նիստի ձայնային արձանագրության համաձայն՝ Մարզպետի 26.11.2024 թվականի՝ «Որդեգրման հնարավորության մասին» եզրակացությունը հետազոտելուց հետո Դատարանի այն հարցին, թե ինչու է առկա մեկ այլ՝ 30.10.2024 թվականի եզրակացություն, արդյոք դրանք նույնն են՝ Դիմողի ներկայացուցիչը հայտնել է հետևյալը. « ... ճիշտն ասած հենց էսօր եմ գնացել եզրակացությունը վերցնելու, որովհետև ինձ զանգ տվեցին և ասեցին, որ 2 օրինակ պետք է Ձեզ փոխանցեինք, բայց տարբեր ամսաթվերով ... խնամակալության մարմնից են մեզ տրամադրել ...նույնն են ...»:

4.10. Դատարանի 25.12.2024 թվականի վճռով (այսուհետ՝ Վճիռ) դիմումը բավարարվել է, հաստատվել է Որդեգրողի կողմից Երեխայի որդեգրումը և վճռվել է Որդեգրողին գրառել որպես Երեխայի մայր:

Որպես Վճռի իրավական հիմնավորումներ՝ վկայակոչվել են Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասը, ՔԴՕ 235-րդ հոդվածը, 236-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, 262-րդ հոդվածի 2-րդ մասը, ԸՕ 112-րդ հոդվածի 1-ին մասը, 113-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետը, 2-րդ մասը, 114-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը, 116-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերը, 117-րդ հոդվածի 1-ին մասը, 118-րդ հոդվածի 1-ին, 5-րդ մասերը, 125-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը:

Վճռում՝ որպես Գործի լուծման համար նշանակություն ունեցող էական փաստեր, արձանագրել են հետևյալ փաստական տվյալները.

- ԱՆ ՔԿԱԳ գործակալության 02.11.2023 թվականի թիվ ԲԱ774819 ծննդի մասին պետական վկայականի համաձայն՝ Երեխան ծնվել է (...) թվականին, որի մասին ՔԿԱԳ միասնական էլեկտրոնային գրանցամատյանում (...) գրանցումը:

- Նոտարական կարգով 02.07.2025 թվականին տրված համաձայնությունների համաձայն՝ ամուսիններ Ա. Ռ. և Հ. Ա. հայտնել են, որ հրաժարվում են Երեխայի նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծնողական իրավունքներից:

- Նոտարական կարգով 02.07.2025 թվականին տրված հայտարարությունների համաձայն՝ ամուսիններ Ա. Ռ. և Հ. Ա. տվել են իրենց համաձայնությունը Երեխայի որդեգրման վերաբերյալ:

- ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Մալաթիայի բաժնի 21.11.2024 թվականի թիվ 547 տեղեկանքի համաձայն՝ Դիմողը դատվածության չունի, ինչպես նաև հետախուզման մեջ չի գտնվում:

- Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի 12.11.2024 թվականի թիվ 17614 տեղեկանքի համաձայն՝ Դիմողը բնակվում է (...) հասցեում (այսուհետ՝ Հասցե): Հասցեում բնակվում են նաև Հ. Ռ., Ա. Ռ., Ա. Ռ., Ա. Ռ., Հ. Ա.:

- Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի 12.11.2024 թվականի թիվ 17615 տեղեկանքի համաձայն՝ Հասցեի բնակելի տունը գտնվում է բարվոք և մաքուր վիճակում, մասամբ վերանորոգված է, բնակվելու համար ունի բավարար պայմաններ:

- Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի 12.11.2024 թվականի թիվ 17616 տեղեկանքի համաձայն՝ Դիմողը ներգրավված է գյուղի սեզոնային գյուղատնտեսական աշխատանքներում՝ իրականացնում է վճարովի ծառայություն Արտաշատ համայնքի այլ գյուղերում: Դիմողը գտնվում է ֆինանսապես ապահով վիճակում, սոցիալական և տնտեսական խնդիրներ չունի:

- Որդեգրման հնարավորության մասին 26.11.2024 թվականի թիվ 01/07468-24 եզրակացության համաձայն՝ Մարզպետը, ղեկավարվելով ԸՕ 113-րդ հոդվածով, Կառավարության 18.03.2010 թվականի թիվ 269-Ն որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը և անձի ու նրանց կենսապայմանների ուսումնասիրության Արտաշատի ՄՍԾՏԿ կողմից տրված նախնական եզրակացությունը, որոշել է Դիմողին տալ դրական եզրակացություն երեխա որդեգրելու հնարավորության վերաբերյալ:

- Դալարի առողջության առաջնային պահպանման կենտրոնի բժշկական հսկողության ամբուլատոր քարտից արված քաղվածքի համաձայն՝ Երեխան գործնականում առողջ է, ուղեկցող հիվանդություններ և բարդություններ չունի:

- ԱՆ ՔԿԱԳ գործակալության պետի 21.05.2024 թվականի թիվ 26.1/19953-2024 գրության համաձայն՝ Դիմողի ամուսնության վերաբերյալ ակտային գրանցում չի հայտնաբերվել:

- Արարատի մարզի Բերքանուշ գյուղի բնակիչներ Ն. Մ., Վ. Ռ., և Ս. Ն. կողմից 05.06.2024 թվականին տրված երաշխավորագրի համաձայն՝ Դիմողը օժտված է մարդկային որակյալ հատկանիշներով՝ ազնվությամբ ու բարեխղճությամբ, հավասարակշռված, պատասխանատու և վստահելի անձնավորություն է, հարևանների և հարազատների նկատմամբ միշտ դրսևորել է հարգալից վարքագիծ: Միաժամանակ նվիրված և հոգատար անձ է, գյուղի մեծահասակներին հարգում է և պատրաստակամ է հնարավորության դեպքում օգնել:

- ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության 21.05.2024 թվականի թիվ 24106106035 տեղեկանքի համաձայն՝ Երեխան 02.11.2023 թվականից հաշվառված է Հասցեում:

- Ծառայության 28.06.2024 թվականի եզրակացության համաձայն՝ Ծառայության տարածքային կենտրոնը 28.06.2024 թվականին կատարել է տնային այց Հասցե՝ Դիմողի սոցիալ-տնտեսական պայմաններն ուսումնասիրելու և որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառելու մասին եզրակացություն տրամադրելու նպատակով, որի արդյունքում տրվել է դրական եզրակացություն՝ Դիմողին որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառելու մասին:

- «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի պոլիկլինիկայի կողմից 23.05.2024 թվականին տրված առողջության վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ Դիմողը գործնականում առողջ է:

- «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի պոլիկլինիկայի կողմից 23.05.2024 թվականի թիվ 490 տեղեկանքի համաձայն՝ Դիմողը Արտաշատի տուբերկուլյոզի կաբինետում հաշվառված չէ և թոքային տուբերկուլյոզը ժխտված է, առողջ է:

- «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի պոլիկլինիկայի 23.05.2024 թվականի թիվ 460 տեղեկանքի համաձայն՝ Դիմողը նարկոլոգի կամ հոգեբույժի մոտ հաշվառված չէ:

- «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Դիմողը մաշկավեներոլոգիական կաբինետում հաշվառված չէ:

Վճռի պատճառաբանական մասի համաձայն՝ (...) Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական նորմերը և դրանք համադրելով գործի փաստերի հետ՝ Դատարանը գտնում է, որ Դիմողի կողմից Երեխայի որդեգրելու գործընթացն իրականացվել է ՀՀ ներպետական օրենսդրության պահանջներին համապատասխան, միաժամանակ դիմումի քննության արդյունքում հաստատվել են գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը, որպիսի պայմաններում Դիմողի՝ Երեխայի որդեգրումը հաստատելու պահանջի վերաբերյալ դիմումը հիմնավոր է և ենթակա է բավարարման: Միաժամանակ Դատարանը կարևորել է այն հանգամանքը, որ Դիմողը որդեգրվողի հարազատ հորաքույրն է, ունի բավարար եկամուտ երեխայի կարիքները հոգալու համար, անհրաժեշտ բնակելի տարածություն, նաև երեխա խնամելու փորձ: Դիմողը բավարարում է երեխա որդեգրելու համար պահանջվող տարիքային, երեխայի կարիքներին համապատասխան ընդունելության պայմանները:

Վճիռը չի պարունակում որևէ տեղեկատվություն Երեխայի և Դիմողի կենտրոնացված հաշվառման և դրա արդյունքում կազմված համապատասխան տեղեկանքների, ինչպես նաև որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի լավագույն շահերին համապատասխանելու եզրակացության վերաբերյալ:

4.11. Վճռի դեմ օրենքով սահմանված ժամկետում վերաքննիչ բողոք չի ներկայացվել և այն մտել է օրինական ուժի մեջ:

4.12. Վճռի հիման վրա 09.07.2025 թվականին կատարվել է Երեխայի որդեգրման պետական գրանցում:

4.13. Մարզպետի պարտականությունները կատարողի՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին 02.12.2024 թվականին հասցեագրված գրությամբ ներկայացվել են Դիմողի և Երեխայի անհրաժեշտ փաստաթղթերը՝ նրանց կենտրոնացված հաշվառման վերցնելու համար:

4.14. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին փոխարինողի պատասխան գրությամբ խնդրվել է ներկայացնել Երեխայի հաշվառման անձնական քարտը՝ կենտրոնացված հաշվառումն իրականացնելու նպատակով: Միաժամանակ

տեղեկացվել է, որ որդեգրել ցանկացող անձի փաստաթղթերի փաթեթում բացակայում է Կառավարության 18.03.2010 թվականի N 269-Ն որոշմամբ հաստատված՝ «Որդեգրման» կարգի 7-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ զբաղեցրած պաշտոնի, աշխատավարձի և այլ եկամուտների մասին տեղեկանքը, ընտանիքի կազմի մասին համայնքի կողմից տրված տեղեկանքում ներառված չեն երեխաների տվյալները, որից ելնելով՝ խնդրվել է տրամադրել փաստաթղթերի փաթեթների ճշտված տարբերակները:

4.15. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 03.03.2026 թվականի գրության համաձայն՝ «(...) երեխայի, որպես որդեգրման ենթակա երեխա, հաշվառված լինելու, իսկ որդեգրել ցանկացող անձի համար՝ որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառված լինելու հանգամանքները հաստատվում են կենտրոնացված հաշվառման տեղեկանքներով: Տեղեկանքները ինքնաշխատ եղանակով ներբեռնվում են «Մանուկ» տեղեկատվական համակարգի համապատասխան ենթահամակարգերից կենտրոնացված հաշվառումն առցանց իրականացնելու արդյունքում: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ մինչև 29.11.2025թ. գործող Ընտանեկան օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված եզրակացությունը որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի լավագույն շահերին համապատասխանելու մասին է, մինչդեռ մարզպետի կողմից որդեգրել ցանկացող անձին 1 տարի ժամկետով եզրակացություն տալու գործընթացը կարգավորվում է ՀՀ կառավարության 18.03.2010թ. N 269-Ն որոշմամբ և հանդիսանում է որդեգրել ցանկացող անձին տրվող որդեգրման հնարավորության մասին եզրակացություն, որը կարող է լինել ինչպես դրական, նույնպես և բացասական: Դրական եզրակացությունը հիմք է հանդիսանում որդեգրել ցանկացող անձին կենտրոնացված հաշվառման վերցնելու համար:»:

4.16. Արարատի մարզպետի 03.03.2026 թվականի գրության համաձայն՝ «Քաղաքացի (...) ստացել է որդեգրման հնարավորության մասին դրական եզրակացություն, սակայն կենտրոնացված հաշվառման չի վերցվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ եկամուտների վերաբերյալ տեղեկանքը բավարար չհամարվելու պատճառով, հետևաբար կենտրոնացված հաշվառմանը հաջորդող գործողություններ չեն իրականացվել: (...): (....) և որդեգրվող երեխայի անձնական շփումների փաստի վերաբերյալ եզրակացություն չի տրվել, որովհետև քաղաքացին չի վերցվել կենտրոնացված հաշվառման, իսկ երեխան չի ունեցել որդեգրման ենթակա երեխայի կարգավիճակի վերաբերյալ կենտրոնացված հաշվառում:»:

5. Հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում էական նշանակություն ունեցող իրավական հարցադրումները

Հաշվի առնելով Արդարադատության նախարարի կողմից միջնորդությունում բերված փաստարկներն ու հիմնավորումները և դրանց դեմ Դատավորի կողմից ներկայացված բացատրությունը՝ Խորհուրդը Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը լուծելու համար էական է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

5.1 *արդյո՞ք Գործով Դատավորի կողմից թույլ է տրվել նյութական և/կամ դատավարական իրավունքի նորմի խախտում,*

5.2. *եթե այո, ապա արդյո՞ք Գործով կատարված/ենթադրյալ խախտումները կատարվել են դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ,*

6. Խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննարկելով Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, լսելով Լիազոր մարմնի ներկայացուցիչների և Դատավորի դիրքորոշումները, ուսումնասիրելով կարգապահական վարույթի նյութերը՝ Խորհուրդը գտնում է, որ ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը:

Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան, իսկ 4-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի այլ լիազորությունները և գործունեության կարգը սահմանվում են Դատական օրենսգրքով:

Սահմանադրության 175-րդ և Օրենսգրքի 89-րդ հոդվածներով սահմանվում են Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները, որոնք ամբողջությամբ ուղղված են դատական իշխանության կազմակերպմանը և բնականոն գործունեության ապահովմանը:

Խորհուրդն արձանագրում է, որ դատավորի, դատարանի և դատական իշխանության անկախության վերաբերյալ իրավական կարգավորումներն ամրագրված են ինչպես ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային իրավական փաստաթղթերով, ընդ որում դատավորի անկախության վերաբերյալ իրավական կարգավորումների ընդհանուր իրավական բովանդակության էությունը կայանում է նրանում, որ դատավորի անկախությունը հանդիսանում է ոչ միայն նրա իրավունքը,

այլ հասարակության՝ օրինական և հիմնավորված արդարադատության իրականացման ապահովման երաշխիքը:

Խորհուրդը հարկ է համարում նշել, որ դատավորի անկախության երաշխիքներն ապահովող գործիքակազմում կարևոր տեղ է զբաղեցնում դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը:

Խորհուրդն իր սահմանադրական առաքելության հաշվառմամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը պետք է իրականացնի այնպես, որպեսզի չվտանգի դատավորի և դատարանի անկախության սահմանադրական պահանջը, ինչպես նաև ապահովի դատավորի կողմից բացառապես իր լիազորությունների շրջանակներում գործելու օրենսդրական պահանջը՝ միաժամանակ երաշխավորելով դատավորի անձեռնմխելիությունը կարգապահական պատասխանատվությունից՝ դատարանի օրենքով վերապահված լիազորությունները բարեխղճորեն մեկնաբանելու դեպքում:

Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ. (…):

Խորհուրդն արձանագրում է, որ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Նախարարի միջնորդության հիման վրա Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննության է առնում Օրենսգրքի 152-րդ հոդվածում ամրագրված դրույթի պահանջներին համապատասխան, այն է՝ «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը Բարձրագույն դատական խորհրդում կատարվում է միայն դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար միջնորդություն ներկայացնելու մասին որոշմամբ նշված կարգապահական խախտման սահմաններում»: Այդ կապակցությամբ Խորհրդի իրավական հետազոտման առարկան սահմանափակվում է միջնորդությամբ ներկայացված հիմքերի և հիմնավորումների շրջանակներում:

Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայության ապացուցման պարտականությունը կրում է կարգապահական վարույթը հարուցած մարմինը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կարգապահական խախտման համար դատավորը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ Խորհրդի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշմամբ:

Դատավորի կողմից կատարված կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են դատավորի օգտին:

Վերը նշված հոդվածի մեկնաբանությունից բխում է, որ տվյալ դեպքում վարույթ հարուցող մարմինն է կրում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայությունն ապացուցելու պարտականությունը: Վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է ձեռք բերվեն ապացույցներ, որոնք իրենց համակցության մեջ բավարար կլինեն Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և վերջինիս մեղքը հաստատելու համար: Այսինքն, գործով ձեռք բերված ապացույցների ոչ բավարար լինելու, դրանց հակասականության կամ բացակայության պայմաններում վարույթ հարուցող մարմինը պետք է կրի այդ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու բոլոր անբարենպաստ հետևանքները:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, իսկ 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք, բացառությամբ այն դեպքի, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին: Մանրամասները սահմանվում են օրենքով:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետության հոգածության և պաշտպանության ներքո են:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որդեգրումը կատարում է դատարանը՝ երեխային որդեգրել ցանկացող անձի (անձանց) դիմումով: Երեխայի որդեգրումը հաստատելու մասին գործի քննությունը դատարանը կատարում է հատուկ վարույթի՝ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից երեխայի որդեգրման համար անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) եզրակացությունը՝ որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին՝ նշելով որդեգրվող երեխայի և որդեգրողի (որդեգրողների) անձնական շփումների փաստի վերաբերյալ

տեղեկություններ, իսկ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության երեխայի որդեգրման դեպքում՝ կենտրոնական մարմնի եզրակացությունը՝ որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին: (...):

Նույն օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որդեգրման ենթակա երեխաների հաշվառումն իրականացվում է սույն օրենսգրքի 110-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, իսկ 2-րդ մասի համաձայն՝ երեխաներ որդեգրել ցանկացող անձանց հաշվառումն իրականացվում է փաստաթղթային և էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Նույն օրենսգրքի 110-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

(...) Մարզպետարանը երեխաների մասին նման տեղեկություններ ստանալու պահից երեք օրվա ընթացքում իրականացնում է երեխաների հաշվառումը և հայտնում այդ մասին Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնին (...): (...) Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը իրականացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառումը, (...): Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառումն իրականացնելու կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Նույն օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որդեգրելու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով որպես երեխա որդեգրել ցանկացող հաշվառված չափահաս անձը (...):

Կառավարության 22.06.2006 թվականի թիվ 962-Ն որոշմամբ հաստատված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառման կարգի 1-ին կետի համաձայն՝ սույն կարգով սահմանվում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառման հետ կապված հարաբերությունները:

Նույն կարգի 4-րդ կետի համաձայն՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց հաշվառումը (սկզբնական, տարածքային և կենտրոնացված) իրականացվում է համապատասխանաբար խնամակալության և հոգաբարձության մարմինների (սկզբնական հաշվառում), Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) (տարածքային հաշվառում) և Հայաստանի

Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից (կենտրոնացված հաշվառում):

Նույն կարգի 14-15-րդ կետերի համաձայն՝ մարզպետարանը (Երևանի քաղաքապետարանը) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվից առանձնացնում է այն երեխաներին, որոնց որդեգրման համար օրենքով սահմանված կարգով ծագել են իրավական հիմքեր և վարում է որդեգրման ենթակա այն երեխաների հաշվառումը, որոնց որդեգրման համար օրենքով սահմանված կարգով ծագել են իրավական հիմքեր:

Կառավարության 18.03.2010 թվականի թիվ 269-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի (Որդեգրման կարգի) 2-րդ կետի համաձայն՝ որպես որդեգրման ենթակա երեխաներ հաշվառվում են այն երեխաները, որոնց որդեգրման համար առաջացել են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իրավական հիմքեր:

Նույն կարգի 3-րդ կետի համաձայն՝ որդեգրման ենթակա երեխաների հաշվառումն իրականացնում են նրանց փաստացի գտնվելու վայրի մարզպետարանների (Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմերը (այսուհետ՝ աշխատակազմ)՝ իրենց ենթակայության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների՝ ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների միջոցով:

Նույն կարգի 4-րդ կետի համաձայն՝ հաշվառումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում աշխատակազմը որդեգրման ենթակա երեխայի անձնական քարտի (N 1 ձև) հիման վրա, որը ներառում է երեխայի կենսագրական տվյալների, էթնիկական ծագման, սոցիալական շրջապատի, ընտանիքի պատմության, առողջության, նաև երեխայի հիվանդությունների, բժշկական հետազոտությունների, զննումների, հիվանդությունների, դրանց բուժումների և ընթացիկ առողջական վիճակի ու երեխայի հատուկ պահանջների մասին տեղեկություններ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված որդեգրման համար տրված ծնողի (ծնողների) համաձայնությունը, կազմում է երեխայի համար անձնական գործ, որի պատճենահանված օրինակն ուղարկում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն)՝ կենտրոնացված հաշվառման վերցնելու նպատակով:

Որպես որդեգրման ենթակա հաշվառվում են նաև այն երեխաները, որոնց որդեգրման համար առկա է ծնողների համաձայնությունը, երբ երեխային որդեգրելու ցանկություն են հայտնել երեխայի խորթ հայրը, խորթ մայրը, նրա ազգականները կամ որդեգրել ցանկացող այլ անձ:

Նույն կարգի 5-րդ կետի համաձայն՝ նախարարությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է որդեգրման ենթակա երեխայի կենտրոնացված հաշվառումը և տեղեկացնում (N 2 ձև) աշխատակազմին:

Նույն կարգի 7-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառվելու նպատակով անձամբ կամ լիազորված անձի միջոցով դիմում են (N 3 ձև) իրենց բնակության վայրի աշխատակազմ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը և դրանց պատճենները՝ (…):

Նույն կարգի 17-րդ կետի համաձայն՝ Նախարարությունն աշխատակազմից ստացված անձնական գործի հիման վրա որդեգրել ցանկացող անձին վերցնում է կենտրոնացված հաշվառման և 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում (N 5 ձև) աշխատակազմին և որդեգրել ցանկացող անձին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հատուկ վարույթներն իրականացնում է սույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն, այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն ենթաբաժնի դրույթներով:

Նույն օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ դատարանը հատուկ վարույթի կարգով քննում է երեխայի որդեգրման վերաբերյալ գործերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Խորհուրդն արձանագրում է, որ օրենքով և ՀՀ կառավարության որոշումներով սահմանվել են որդեգրման ենթակա երեխաների և որդեգրել ցանկացող անձանց կենտրոնացված հաշվառման ընթացակարգերը՝ որդեգրումը հաստատելու մասին գործերի քննությունը օրենքով սահմանված հատուկ վարույթի կարգով վերապահելով դատարանի իրավասությանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխա որդեգրելու վերաբերյալ դիմումը տրվում է որդեգրվող երեխայի հաշվառման, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վայրի առաջին ատյանի դատարան:

Նույն օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 262-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 10-րդ կետերի համաձայն՝ *դիմումին պետք է կցվեն՝* **որդեգրվող երեխայի կենտրոնացված հաշվառման մասին տեղեկանք**, ինչպես նաև **Կառավարության լիազորած մարմնի եզրակացությունը՝ որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի լավագույն շահերին համապատասխանելու մասին՝** *նշելով որդեգրվող երեխայի և որդեգրողի (որդեգրողների) անձնական շփումների փաստի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև բոլոր այն փաստաթղթերի պատճենները, որոնք որդեգրել ցանկացող անձը (անձինք) ներկայացրել է (են) եզրակացությունն ստանալու համար*:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածում նշված պահանջները չկատարելու դեպքում դատարանը սույն օրենսգրքի 127-րդ հոդվածով սահմանված կարգով վերադարձնում է դիմումը:

Նույն օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը վերադարձնում է հայցադիմումը, եթե չեն պահպանվել սույն օրենսգրքով հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կից փաստաթղթերին ներկայացվող պահանջները:

Նույն օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որդեգրման վերաբերյալ դիմումը մերժվում է՝

1) եթե ներկայացված փաստաթղթերը թերի են կամ ներկայացրած փաստաթղթերի գնահատմամբ դատարանը հանգում է հետևության, որ որդեգրումը չի ապահովում երեխայի լավագույն շահերը.

2) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Նշված նորմերի նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Խորհուրդը փաստում է, որ օրենքով սահմանված են երեխա որդեգրելու վերաբերյալ դիմումին կից պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ, այդ թվում՝ **որդեգրվող երեխայի կենտրոնացված հաշվառման մասին օրենքով սահմանված կարգով տրված տեղեկանք և կառավարության լիազորած մարմնի եզրակացություն՝** որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի լավագույն շահերին համապատասխանելու մասին՝ նշելով որդեգրվող երեխայի և որդեգրողի (որդեգրողների) անձնական շփումների փաստի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև բոլոր այն փաստաթղթերի պատճենները, որոնք որդեգրել ցանկացող անձը (անձինք) ներկայացրել է (են) եզրակացությունն ստանալու համար: Ընդ որում, վերը նշված պահանջը չպահպանելը դատական վարույթ սկսելու փուլային արգելք է և դրա իրավական հետևանքը դիմումը վերադարձնելու որոշումն է:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Խորհուրդն արձանագրում է, որ երեխա որդեգրելու պահանջի վերաբերյալ դիմում ներկայացվելու դեպքում դատարանը կարող է այն վարույթ ընդունել, եթե այն բավարարում է դրան կից փաստաթղթերին ներկայացվող օրենքով սահմանված պահանջները: Ընդ որում, օրենքի իրավակարգավորումից հետևում է, որ նշված նորմով սահմանված պահանջներին չբավարարող դիմումը վերադարձնելը ոչ թե դատարանի հայեցողական լիազորությունն է, այլ պարտականությունը, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նորմն իմպերատիվ բնույթ ունի:

Տվյալ դեպքում Խորհուրդն արձանագրում է, որ Գործով ներկայացված դիմումին կից դիմողի կողմից ներկայացված չեն եղել որդեգրվող երեխայի կենտրոնացված հաշվառման մասին օրենքով սահմանված կարգով տրված տեղեկանքը, ինչպես նաև որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի լավագույն շահերին համապատասխանելու մասին կառավարության լիազորած մարմնի եզրակացությունը: Նշված փաստը չի հերքվել և հաստատվել է Խորհրդում տեղի ունեցած դատական նիստի ընթացքում Դատավորի կողմից հայտնված դիրքորոշմամբ:

Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Դիմողի կողմից Դատարան ներկայացված Դիմումը չի համապատասխանել երեխա որդեգրելու վերաբերյալ դիմումին կից փաստաթղթերին ներկայացվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 10-րդ կետերով սահմանված պարտադիր պահանջներին, որպիսի պայմաններում առկա է եղել նույն հոդվածի 3-րդ մասով և 127-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ Դիմումը վերադարձնելու հիմքը: Այսինքն՝ տվյալ դեպքում Դատարանը պարտավոր էր Դիմումը վերադարձնել, մինչդեռ Դատարանի 22.08.2024 թվականի որոշմամբ Դիմումն ընդունվել է վարույթ:

Նշվածի կապակցությամբ Դատավորը հայտնել է, որ Դատարանը Դիմումը վարույթ է ընդունել՝ ելնելով երեխայի լավագույն շահերից և դիմողի՝ դատարանի մատչելիության իրավունքը չսահմանափակելու հանգամանքից՝ հնարավոր համարելով թերությունները շտկել գործը դատաքննության նախապատրաստելու փուլում: Մինչդեռ Դատավորի կողմից ներկայացված վերը նշված փաստարկը Խորհուրդը համարում է անհիմն, քանի որ Գործով առհասարակ չեն ներկայացվել որդեգրման ենթակա երեխայի հաշվառման վերցված լինելու մասին ապացույց, Դիմողի՝ որպես որդեգրել ցանկացող անձի կենտրոնացված հաշվառման մասին N 5 ձև տեղեկանք, ինչպես նաև որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի լավագույն շահերին համապատասխանելու մասին կառավարության լիազորած մարմնի եզրակացություն:

Այս առնչությամբ Խորհուրդն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև, որ իր կողմից նախկինում ձևավորված մոտեցումների լույսի ներքո երեխայի որդեգրման վերաբերյալ գործերով նույնպես կարևոր նշանակություն ունի երեխայի լավագույն շահերի բացահայտումն ու դրանց առաջնային նշանակության տրամադրումը, քանի որ այդ գործերով կայացվող դատական ակտն առնչվում է երեխայի և այլ անձանց իրավունքներին ու շահերին, և առկա է դրանց հավասարակշռման անհրաժեշտություն: Միաժամանակ Խորհուրդը գտնում է, որ երեխայի լավագույն շահերի բացահայտմանը դատարանը կարող է անդրադառնալ գործը վարույթ ընդունելուց հետո՝ գործը դատաքննության նախապատրաստելու, դատաքննության և եզրափակիչ ակտ կայացնելու դատավարական փուլերում[3]: Իսկ դիմումը վարույթ ընդունելու փուլում դատարանի առաջնահերթ խնդիրը դիմումն օրենքով սահմանված պահանջներին համապատասխան ներկայացված լինելու փաստի ստուգումն է, իսկ օրենսդիրը դատարանի համար իմպերատիվ ձևով սահմանել է պարտականություն՝ վարույթ ընդունել միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը:

[3] Տես, դատավոր Գևորգ Բալյանի վերաբերյալ Խորհրդի 04.09.2023 թվականի թիվ ԲԴԽ-74-Ո-Կ-18 որոշումը:

Վերը նշված հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ տվյալ դեպքում Դատարանը Դիմողի կողմից ներկայացված՝ երեխայի որդեգրումը հաստատելու մասին դիմումում նշված որդեգրման ենթակա երեխայի լավագույն շահերի բացահայտմանը կարող էր անդրադառնալ միայն նշված դիմումի վարույթ ընդունելու փուլը հաղթահարելուց, այսինքն՝ Դիմումն օրենքով սահմանված պահանջներին համապատասխան Դատարան ներկայացված լինելու փաստը պարզելուց և այն օրենքով սահմանված կարգով վարույթ ընդունելուց հետո:

Վերոգրյալ իրավական նորմերի և Գործի փաստական հանգամանքների համադրության արդյունքում Խորհուրդը փաստում է, որ Դիմողը, օրենքով սահմանված կարգով հաշվառված չլինելով որպես որդեգրել ցանկացող անձ, չի ունեցել երեխա որդեգրելու իրավունք, իսկ Երեխան չի հանդիսացել որդեգրման ենթակա երեխա, մինչդեռ Դատարանը վերոգրյալի անտեսմամբ, ինչպես նաև առանց որդեգրման հիմնավորվածության և որդեգրումը Երեխայի լավագույն շահերին համապատասխանելու մասին կառավարության լիազորած մարմնի եզրակացության Վճռով հաստատել է որդեգրման իրավունք չունեցող անձի կողմից որդեգրման ենթակա երեխա չհանդիսացող անձի որդեգրման փաստը՝ թույլ տալով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասով, 114-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 116-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 10-րդ կետերով, 3-րդ մասով և 127-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված նորմերի խախտումներ:

Ինչ վերաբերում է Դատավորի այն փաստարկներին, որ Գործում առկա բազմաթիվ ապացույցների առկայության պայմաններում Երեխայի՝ որպես որդեգրման ենթակա երեխա հաշվառված լինելու, Դիմողի՝ որպես որդեգրելու իրավունք ունեցող անձ հաշվառված լինելու մասին տեղեկանքների, ինչպես նաև որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի լավագույն շահերին համապատասխանելու մասին կառավարության լիազորած մարմնի եզրակացության բացակայությունը ձևական բնույթ է կրել և գործել է այն կանխավարկածը, որ նշված փաստերն ապացուցված են, ապա Խորհրդի գնահատմամբ դրանք անհիմն են, քանի որ արդեն իսկ հիշատակված վերաբերելի իրավակարգավորումների համադրման արդյունքում Խորհուրդն արձանագրում է, որ տվյալ բնույթի վեճերը քննարկելիս և լուծելիս վերը ներկայացված օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում հստակորեն թվարկված ապացույցներով ապացուցման ենթակա հանգամանքները (հաշվառման և այդ կերպ նաև որդեգրման իրավունք ձեռք բերելուն իրավաչափորեն հավակնելու) ստուգելու և պարզելու փոխարեն Դատարանը դրանք հաստատված է համարել այլ ապացույցներով, ինչն անթույլատրելի է: Այսինքն՝ Դատավորի եզրահանգումները հիմնված չեն եղել որդեգրման գործընթացը և դրանում ներառված

քայլերի հստակ հաջորդականությունը մանրամասնորեն կանոնակարգող օրենսդրության՝ սույն որոշման մեջ ներկայացված իմպերատիվ պահանջների վրա:

Նշված պատճառաբանությամբ Խորհուրդն անհիմն է համարում նաև Դատավորի այն պնդումը, որ դիմումը վարույթ ընդունելը և այն բավարարելը Դատավորի կողմից օրենքի մեկնաբանության, փաստերի և ապացույցների գնահատման արդյունք են:

Սույն կարգապահական վարույթի փաստական հանգամանքների և կատարված իրավական վերլուծության համադրման արդյունքում Խորհուրդը, անդրադառնալով Դատավորի արարքին և մեղքի ձևին, հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Օրենսգրքի 142-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

Վերը նշված իրավանորմերի տրամաբանությունից բխում է, որ օրենսդրի կողմից արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտման վարքագծի առումով առանձնացվել են մեղքի դրսևորման երկու ձևեր՝ դիտավորություն և կոպիտ անփութություն:

Խորհուրդն արձանագրում է, որ դատավորի կարգապահական պատասխանատվության տեսանկյունից մեղքը դատավորի վերաբերմունքն է իր կողմից կատարված արարքի նկատմամբ:

Միաժամանակ քննարկելով Դատավորի մեղքի ձևը՝ Խորհուրդը գտնում է, որ Դատավորն իրեն վերագրվող խախտումները կատարել է կոպիտ անփութությամբ, քանի որ չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև վերը նշված փաստերի առկայության պայմաններում տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

Խորհուրդը փաստում է, որ Դատավորի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս Խորհուրդը հաշվի է առնում խախտման բնույթը և հետևանքները, դիտավորությունը կամ կոպիտ անփութությունը, դատավորի անձը, առկա տույժերը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Խորհուրդն արձանագրում է, որ կարգապահական պատասխանատվության հարցի քննության պահին Դատավորը չի ունեցել կարգապահական տույժ:

Միաժամանակ, Դատավորի նկատմամբ կիրառման ենթակա կարգապահական տույժի համաչափության տեսանկյունից Խորհուրդն էական է համարում սույն գործի փաստերն ու խախտման բնույթը՝ Երեխայի լավագույն շահի ոտնահարման առումով

բացասական հետևանքի փաստացի բացակայությունը. վերջինս որդեգրվել է նախկինում իր հետ համատեղ բնակվող հորաքրոջ կողմից և շարունակել է ապրել նույն տանը և նույն ընտանիքում, որտեղ բնակվել է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասով, 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 149-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 2-րդ մասով, 154-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 155-րդ հոդվածով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ արդարադատության նախարարի միջնորդությունը՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռուբինա Աթոյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, բավարարել: Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռուբինա Աթոյանին հայտարարել նկատողություն:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ _____ ***Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ***

ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ _____ ***Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ***

_____ ***Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ***

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ _____ ***Կ. ԹՈՒՄԱՆՅԱՆ***

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ _____ ***Ե. ԹՈՒՄԱՆՅԱՆՑ***

_____ ***Մ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ***

_____ ***Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ***

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ _____ ***Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

_____ ***ԷԴ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

_____ ***Ք. ՄԿՈՅԱՆ***